

**ՀՈՎՀԱՆ ՈՍԿԵԲԵՐԱՆ
ՆԵՐՔՈՂ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐՉԻՆ**

Մեզ համար հրաշալի և ավելի պայծառ է այսօր-վա տոնը, քան մեր այս սովորական շարադրանքը: Եվ ո՞րն է պատճառը, կամ ո՞վ է արդյոք այս բազմահույլ հանդեսին հրավիրողը: Կա՞ մեկ ուրիշը, քան մեր երա-նավետ և մեծ խոստովանող հայրը, որի հիշատակը տոնում ենք այսօր: Որ նրա արի քաջությունների պատմության համեմատ մեր միտքը և խորհուրդները բոլոր զգայարաններով հանդերձ պիտի մաքրենք, թե-րևս արժանի լինենք երանելի հոր առաքինությունը պատմելու՝ մասնավորաբար ընդունելով հոգու մեջ իմաստության խոսքը: Նա կարոտ չէ այս մարդկային բարեխոսության որևէ պատվի և փառքի առավելու-թյան, այլ հատկապես մենք ենք զգում նրա բարեխոսության կարիքը, քանի դեռ բնակվում ենք մարմնի մեջ: Որի առիթը մխիթարությունն է, և միայն բազմավիշտ նահատակին բարեբանելը, այլև կարևոր է նա-խանձախնդիր լինել նրա հրեշտականման վարքի առաքինությանը, թեև չենք կարող նրա հետ համեմատվել: Որովհետև հողեղենների մեջ ո՞ր մեկը կարող է դիմանալ այդքան անտանելի չարչարանքներին ու գրկանքներին: Եվ ոչ էլ առաջին նահապետ հայրերից, կամ նրանք՝ ճգնավորներն ու վկաները Փրկչի տնօրինությունից հետո հետևեցին Նրա չարչարանքներին: Միայն ըստ մեր կարողության և հոժար սիրով գովա-բանված հորը հաղորդակից լինելով դիմենք խոսքին, ըստ այն իմաստունի, թե՛ «Արդարի հիշատակը գովու-թյամբ է, և արդարների գովքի մեջ ցնծում են մար-դիկ»: Նրանց փառքի մեջ չավելացրեց, այլ մեզ՝ բարեբանողներին արանով շատ օգուտ են տալիս:

Եվ արդ, քանի որ այսօր մեր աստվածազգյաց հո-գևոր հայրը, հովիվն ու վկան, այս ապականված կյանքից, իրոք վերացավ երջանիկ կյանք, ուր անպատմելի ուրախությունն է և անշոշափելի լույսը, ուր հրեշտակ-ների բազմությունն է և անդրանիկների գործը, ուր առաքյալների աթոռներն են և մարգարեների տեսա-րանները, ուր նահապետների զավագաններն են և մարտիրոսների պսակը, ուր վերին Երուսաղեմն է և անսահման խաղաղությունը, ուր սրբերի բազմու-թյունն է և արդարների բնակությունը: Բայց մենք ի՞նչ պետք է անենք այսքան թշվառ նեղություններով շրջապատված: Քանզի չենք գտնում արժանիին, որով պիտի բարեբանենք գովության արժանավորին: Եվ ինչ, արդյո՞ք պիտի լռենք: Եվ ինչի՞ համար պատրաս-տեցինք այս հանդեսը: Այլ ասենք, թե քանի որ գործի մեծությունը խոսքին հավասարեցնել չկարողացանք, և նույն պատճառով առավել ևս պետք էր և արժան էր խոսել: Քանի որ սա վայել է մեծագույն բաների գովա-բանությանը՝ չկարողանալ նյութի առավելությունը խոսքին հավասար ցույց տալ, որովհետև երբ առաքի-նությունները ավելի վեր են լինում քան մեր բնու-թյունը, ապա իսկապես էլ պարզ է դառնում, որ գովա-բանություններն ավելի [շուտ] են բարձրանում, քան մարդկային մտածումները: Բայց այս երանելին չի անտեսում մեզ և չի մերժում մեր այս տկարամիտ խոսքը, այլ, բոլորի Փրկչի նմանությամբ, մեզնից [տրված] այս փոքր ընծան, մի մեծ բան է համարում, և քչի փոխարեն բազմապատիկը պիտի հատուցի, քանզի ոչ թե իրերի առավելությանը, այլ մտքի իսկ առա-տությանն է նայում: Որի համար չնայած մեր [մտքե-րը] խիստ թերի են, սակայն ինչով որ հարուստ ենք, պիտի առատորեն մատուցենք, որովհետև Աստծու սի-րելիներն ըստ կարողությանն են պահանջում: Նաև սրանով առավել ևս ճանաչվում է սրա մեծախորհուրդ հանդեսը՝ ոչ թե դուրս վանել այս աննշան ընծան տկար մարմնից և բազմաթիվ նեղություններով պա-շարված անձից, այլ մեզանից ընդունելով գովաբանու-թյան խոսքը, որի կարիքը երբեք չունի, փոխարենը հատուցում է գործերով, մասնավանդ որոնց կարոտն ու պետքը շատ ենք զգում:

Եկ այսուհետև, հատուցենք խոստման տոկոսները՝ հետագա խոսքի սկիզբը դնելով: Բայց չգիտեմ, թե ո՞ր ուղղությունից մարդուն պիտի հիշատակենք: Քաջու-թյան պայքա՞րը դաշտում, թե՞ ժուժկալությունը ար-յան հասնող զանազան տանջանքներով, նահատակու-թյան ընթացքը, թե՞ բազում տարիների համբերու-թյունն անտանելի նեղություններին խորվիրապում, առաքելական քարոզությունը, թե՞ մարգարեության շնորհը, հովվական վերակացությունը, թե՞ անապատի մեջ անմարմին ճգնությունը: Քանզի ամեն ինչում մարդը մեծախորհուրդ է, ամեն ինչում հաճու, ամեն ինչում առաքինի, ամեն ինչում ընտիր, ամեն ինչում համբերող, ինչպես անբեկանելի արձան, ինչպես ան-պարտելի աշտարակ՝ հակառակ սատանայի հնարներին:

Սակայն այստեղ սկզբից պետք է և արժանի է ձեռ-նարկել այս խոսքը, Իրոք, ինչի՞ց: Իսկապես հայտնի է, թե Հոգու շնորհների կանչից՝ նրան առաջնորդելով այն մահապական տարիքից դեպի ճշմարիտ հավատք: Քանզի ինձ թվում է, որ մեր երջանիկ հայրը մեզն է եղել այն մեծ նահապետ և աստվածահայր Աբրահա-մին, որովհետև ինչպես Աստծուց նրան հրաման եղավ՝ հայրենի երկրից և անհավատ ժողովրդից դուրս գալ, նույն օրինակով և այս երանելին, ինչպես Աստծու կանչով դուրս ելնելով խավարից՝ կռապաշտության երկրից, արդարև մտնում է ավետյաց երկիր, ուր հնչում էր Քրիստոսի մեծագույն պատվիրանների ձայնը, ուր Փրկիչը հայտնապես քարոզում էր Ավետա-դանը, որտեղ իսկապես կրթված էր լինում Քրիստոսի խորհուրդների տնօրինական դաստիարակությամբ՝ վերահասու լինելով կարճ ժամանակում: Սրանից հե-տո դարձյալ տնտեսության խորհուրդը և դարձյալ այնտեղից կանչվելը, որտեղ պատրաստ էր ընթացքը շարունակելու և հավատքը պահելու՝ տեսակտեսակ չարչարանքներով ու ճգնությամբ, ըստ խոստացվածի՝ լինելով բազում ազգերի հայր: Որովհետև «Մի քա-ղաք, որ լեռան վրա է կանգնած, չի կարող թաքնվել: Եվ ճրագը վառելով կաթսայի տակ չեն դնում, այլ աշ-տանակի վրա, որպեսզի լույս տա բոլորին» (հմմտ. Մատթ. Ե 14, 15): Նույնպես և նրա անունն ու գործը ավելի պայծառ են, քան արևը, որից ոչինչ մեզ չի թաքցնելու:

Նախ [պարտ է] հայտնի դարձնել այս երանելու անվանակոչությունը, որովհետև այդ կոչումից պիտի ճանաչենք նրա երկնային կենցաղավարությունը և առաքինի վարքով անմարմիններին նմանվելը: Գրի-գոր, նշանակում է առաքինությամբ հսկող արդարու-թյան օրինակ, Քրիստոսի արժանի պսակ, ճգնության ասպարեզում հռչակավոր, նույնի մեծ խոստովանող ու վկա, Աստծու Հոգու գեղեցիկ անոթ, քահանաների միտք, հովվապետների պատկեր, երկնային գործի հետ բնակվող, մարտիրոսների պարծանք, առաքյալների լրում, մարմնավոր հրեշտակ երկրի վրա: Գրիգորը մտքի ոտքերը հավատքի անշարժ վեմի վրա հաստա-տելով, շտապում էր երկինք բարձրանալ, որպեսզի այնտեղ տեսնի լույսն ամենապայծառ աչքերով, որ և միշտ տեսնում էր մաքուր մտքով Դավթի հետ փառքի Տիրոջ աջ կողմում, որով երկակի, [ախիճքն]՝ բանա-կաններից, օրինակ, մարդկանց, և դևերի [պատճառած] նեղությունների հեղիեղատներից չէր տարուբերվում: Գրիգորը, որ խավարի մեջ էր մտնում հաված աստ-վածային

շնորհներին, ինչպես այն Մովսեսը լեռան վրա, որտեղից ոչ թե ձեռքով, այլ [աստվածային] տե-սիլքի հայտնությանը Հոգու մատներով շինված, տախտակն էր ընդունում, և իր հարազատ ժողովրդին սրտի ընդունարանի մեջ հրաշքով օրինադրում: Եվ խավարից դուրս հանեց բազմաստված կուռքերը, ոչ թե ժառանգելու երկիրը, ինչպես Նավեան Հեսուն, այլ դեպի երկինք առաջնորդելով տանում էր հաջողու-թյան: Գրիգորը ճշմարիտ հավատքի բարեպաշտու-թյունը համարձակությամբ քարոզում էր բռնավոր արքայի առաջ և վախենալով [հանդերձ] չէր զարհու-րում նրանից: Գրիգորը, որ այս աշխարհի վայելչու-թյունը և առօրյա ցանկությունն ավերորդ համարելով ոտքի տակ էր գցում, և թոթափելով երկրային ծառա-յությունը լավագույններին ձեռք մեկնելով՝ հետևում էր Քրիստոսին: Գրիգորը, որ արժանանալով նահապետ լինելու շնորհին, ապագան էր գուշակում մարգարեա-կան հոգու լսողությամբ, և առաքյալների աստիճան ժառանգելով՝ անթիվ ընտրյալ անձանց բազմությունն Աստծուն էր ընծայում: Ուստի Մուրբ Հոգու շնորհների աղբյուրը նրանից բխելով հայտնվեց այնտեղ: Գրիգոր կոչվելով ընդունեց քահանայապետության օծումը, ըստ Պողոսի՝ «Ոչ մարդկանցից և ոչ մարդու ձեռքով, այլ վերին տնօրինությանը և Մուրբ Հոգու հայտնու-թյամբ»: Գրիգորը հոգևոր պատերազմի ասպարեզում միանձնական վարքով ճգնում էր կռվասեր թշնամու դեմ՝ միշտ մեռնելով աշխարհի համար աղոթքով, պահքով և զանազան առաքինություններով հանուն Քրիստոսի սիրո: Որի պատճառով սերովբեներին միա-նալով՝ Մուրբ Երրորդության օրհնությունը միշտ բարձրունքներում էր մատուցում:

Եվ ինչու՞ երկարացնենք խոսքը: Քանզի երբ մտքով անցկացնում եմ սրբի անտանելի նեղությունները, դողն ու սարսափն ընկնում է իմ մեջ, ինչու՞ լի-նելով բնությամբ մահկանացու և ապականացու, այդ-չափ չարչարանքներ էր կրում մարմնի մեջ: Բայց թե-պետ առաջին սրբերից յուրաքանչյուրն ընդունեց չարչարանքները, սակայն՝ մի փոքր ժամանակով և պակաս:

Եսային սողովեց, բայց՝ մեկ վայրկյանում, Հով-հանները գլխատվեց, սակայն՝ մի ակնթարթում, Ստե-փաննոսը քարկծովեց բայց՝ նույն պահին, Պետրոսը խաչվեց, սակայն՝ արագ իրագործմամբ, Պողոսը սպանվեց և գլխատվեց, բայց՝ նույն ժամին: Մարտիրոսները չարչարվեցին զանազան հնարներով, բայց ոչ բոլորը նույն ձևով, այլ տարբեր ձևով, ըստ ժամանակի պահի և բռնացողների հնարների: Իսկ այս սքանչելին՝ վկան և հայրը, հրաշքով գերազանցում է մարդկային միտքն ու խորհուրդը, քանի որ բոլոր չարչարանքների ձևե-րը, որ ամենքն ընդունեցին, նա իր անձի մեջ քաջու-թյամբ կրում էր իբրև օտար մի բան, ուրեմն ան-տեղյակ էր բնության հատկություններին, [այլ] ցան-կանում էր դուրս գալ մարմնից և լինել Քրիստոսի հետ: Ո՞վ աստվածասեր անձ, անփոխարինելի բարո-թյունների քաջ առաջամարտիկ, ո՞վ հավատքի ջերմե-ռանդ [նվիրյալ] և Քրիստոսով կատարյալ սեր:

Ուրեմն, սիրելիներ, հոժարակամ նմանվե՛ք նրան, ըստ Պողոսի, թե՛ «Նմանվեցե՛ք ինձ, ինչպես որ ես՝ Քրիստոսին» (Ա Կորնթ. ԺԱ 11): Սրան հետևե՛ք, վե-րին օրևաններում համաձայն առաքինի ընթացքի նրա հետ անտեսելով կարծեցյալ պայծառությունը, անցողիկ վայելքը և ժամանակավոր փառքը, փափա-զեք անապական փառքին, անբառամ պակսին, անմահ արքայությանը, հրեշտակներին դասակից լինելուն, [Մուրբ] Երրորդությանը բնութենակից լինելուն՝ գի-տակցելով, որ այս ապականացու կյանքն իր մեջ բնակ-ված այսքան բարություններ չունի, այլ միայն՝ ար-տասուք, տառապանք, աղբատություն, վիշտ, ցավ, նեղություն, պակասություն, հիվանդություն, ծերու-թյուն, տարատեսակ մեղքեր և վերջում մահ: Մեր երանելի հայրը, այսքան և այսպես քարոզեց կյանքն իբրև անցավոր բան, որի համար իր անձը ընծայեց Աստծուն որպես զոհ, ընթացավ Քրիստոսի խաչի չար-չարանքներով: Անշուշտ գիտե՛ր ըստ մեծ Պողոսի թե՛ «Այս ժամանակի չարչարանքներն արժանի չեն բաղ-դատվելու գալիք փառքի հետ, որ հայտնվելու է մեզ» (Հռոմ. Ը 18):

Այլ գիտե՛մ, սիրելիներ, որ ձեզանից յուրաքան-չյուրը ցանկանում է մասնակից լինել նրա չարչա-րանքներին, որպեսզի հաղորդակից լինի Տիրոջ պատ-րաստած պատկերին: Բայց քանի որ մարտիրոսու-թյան ժամանակը չէ, և ոչ էլ նահատակության շրջանի ընթացքը, միթե՞ պիտի վիստվե՞ք: Սակայն այս պատ-ճառով մի տխրեք անհույս, քանի որ թեև նրանց հա-մար այժմ [այդ քայլն] անձեռնարկելի է, սակայն ձեր անձերը կրթեցե՛ք նահատակության ժամանակի հա-մար: Նա արհամարհեց ողջ կյանքը, արհամարհեցե՛ք և դուք գոնե հատկապես նրա ուրախության համար: Նա կրակին մատնեց իր անձը, մարեք և դուք ձեր անձե-րից ցանկության կրակը: Նա արյուն թափեց, իսկ դուք արցունք թափեցե՛ք Տիրոջ առաջ: Նրա հետ, նաև կա-րողության ավերորդ տվեք աղբատներին: Նա կա-յծակների բոցը գցեց ոտքի տակ, հանգցրեք և դուք ձե-զանից գայլույթի բոցը: Նա բազմաթիվ նեղություն-ներից հետո համբերե՛ց՝ ապրելով մահաշունչ գազան-ների հետ խորվիրապում, համբերե՛ք և դուք աշխար-հալեցուն կյանքի փորձանքներից խելահասությամբ: Մովորեցնում է իմաստունը՝ «Մի անարգի՛ր Տիրոջ խրատը» (Առակ. Գ 11), իսկ Դավիթն [ասում է], «Երա-նի է այն մարդուն, որին խրատում է Տերը» (Մաղմ. ԳԳ 12), սրա հետ և առաքելական խոսքը երանի է տալիս [նրանց], ովքեր համբերում են փորձանքներին, «Եթե հաստատ լինի [փորձության մեջ], - ասում է, -կստանա կյանքի պակար Տիրոջ կողմից» (Հակոբ. Ա 12):

Հիշե՛ք և նրա համբերությունը խոր վիրապի մեջ, որքա՞ն էր նեղություններով դառնացած: Բայց քանի որ հիշեցիք այն վտանգավոր տեղը, պետք է համառոտ խոսքով դեզերել այնտեղ, եթե հաճելի թվա, իսկ մտքով խորհել, թե ինչպիսին էր իրոք սրբի կյանքն՝ այդչափ մահաբեր գազանների մեջ բնակվելով: Որ-քա՞ն խորհուրդ բարիներին, և ի՞նչ գործ: Այսուհետև գնանք և հոգու աչքերով նայենք երանելուն, թերևս կարողանանք նրանից ինչ-որ բան շահել, և փոքրիշա-տե իմանանք նրա պարկեշտության և անմարմին վար-քի մասին, այլև անսահման առաքինության, անդա-դար աղոթքների, անհանգիստ տքնության, անմահ արթնության, անբեկանելի հավատքի, անխզելի հույ-սի, պաղատելի արցունքների, առողջ մաղթանքների, պահքով անմարմիններին նմանվող կյանքի, որովհե-տև արդարի կենցաղավարությունն իրապես անմար-մին գոյի [կենցաղավարություն էր] ցույց տալիս, ան-աշխատ էր նրա սեղանը, անաշխատ կերակուրների նման նաև շատ էր ցանկալի ճգնավորական լռություն-ը, ինչպես միշտ երագում էր հետևել երկնային գո-րություններին, աղավմու թևեր ստանալ և գնալ անա-պատում հանգչելու: Նրա տխրությունը այլ բան չէր, որ չլինի թե այնտեղ նահատակության [ճգնական մարտի] ասպարեզում թերի մնա: Սակայն նրա ողջ կյանքը վկայության հանդես էր, միշտ պատերազմե-լով պետությունների և խավար աշխարհակալ իշխա-նությունների դեմ, նրա համար, անշուշտ, Խաչի վրա էր բարձրացված աշխարհը, իսկ նա աշխարհի վրա, ըստ Առաքյալի՝ «Աշխատանքների և հոգնությունների մեջ, քաղցի և ծարավի մեջ, պահքի և տքնության մեջ, ցրտի և մերկության մեջ» (հմմտ. Բ Կորնթ. ԺԱ 27):

Իսկ ո՞վ կարող է խոսքով պատմել երանելու ան-սահման ճգնության մասին, կամ օրինակով ցույց տալ նրա անտանելի նեղությունը, որ ապրում էր իժեքի և քարքերի մեջ, որտեղ ոչ գրուցակից կար, ոչ վշտակ-ցող, ոչ բարեկամ, ոչ օգնական, ոչ մխիթարող և ոչ ծա-ռայող, այլ համբերում էր մեծ ժուժկալությամբ, իր-րև կենդանի դրված գերեզմանի մեջ, անտուն, մերկ, այնքան ժամանակ, զիչերցերեկ, ամռան շոգին և ձմռան սառնամանիքին: Քանզի այս մարդը մոտ էր Աստծուն, լցված հոգու շնորհներով իմաստության գի-տությամբ, մտքի պայծառ աչքերով, հոգով մաքրված, աշխարհական գրադմուրքներից հեռացած, աչքի առջև միայն հանդերձալի ռուներ, աչքերի առաջ ապագան էր տեսնում, Տիրոջ խրատներով էր խրախուսվում, հզորանում Աստծու խոսքով, «Աշխարհում, ասում է, - նեղություն պիտի ունենաք, սակայն քաջալերվեցեք, որովհետև ես հաղթեցի աշխարհին» (Հովհ. ԺՁ 33): Հիշում էր ուրեմն նաև առաքելական խոսքը, որ թե՛ «Մեր այս արտաքին մարդն ապականվում է, -ասում է, -բայց օրեցօր նորոգվում է ներքինը, որովհետև այս հաճախակի նեղությունների մեջ մեզանում գործում է հավիտենական կյանքը»: Սաղմոսում էր և Դավիթի հետ. «Համբերությամբ սպասեցի Տիրոջը, և նա լսեց իմ աղոթքները, նա ինձ հանեց տառապանքների փո-սից, ցեխից և տիղմից» (Մաղմ. ԼԹ 2-3), նաև թե՛ «Ե՞րբ պիտի գամ ու երևամ Աստծու առաջ» (Մաղմ. ԽԱ 3), «Քանի որ այրվում եմ ես խանդակաթ սիրով» (Երգ. Բ 5), «Յույց տուր ինձ, -ասում է, -քո երեսը և լսելի դարձրու քո ձայնը, քանզի քաղցր է քո ձայնը, և գեղե-ցիկ է երեսը քո» (Երգ. Բ 14), «Կգանք քո օժման յուղե-րի հոտի ետևից» (Երգ. Ա 3): Այսպես, ուրեմն, միշտ բարբառում էր և աղոթքներով խնդրում երանելի Գրիգորը, այսպիսի մաղթանքների մեջ խոնարհեց-նում էր ամենողորմ Աստծու գթությունը, մինչև որ քաջ հովիվն այցելության եկավ իր մոլորված հոտին, «Նա, ով կամենում է, որ բոլոր մարդիկ փրկվեն և հաս-նեն ճշմարիտ գիտությանը» (Ա Տիմոթ. Բ 4): Այսպիսի-սին էր այցելության օրինակը:

Հռիփսիմն անունով գեղեցկությամբ հռչակված մի կույս կար: Նրա միջոցով արեգակը լուսավոր աստ-ղերի հետ միասին ծագեց արևմուտքից դեպի արևել-յան կողմը: Նա կույսերի վայելչությունն էր, մարտի-րոսների պարծանքը, հրեշտակների և ուրախացնողը, դեերին սարսափեցնողը, երկնավոր Փեսայի հարսնա-ցուն, Աստծու ինքնանվեր ընծան, սրբություն սիրողը, մաքրամաքուր խորհուրդը, առաքինի հոգին, քաջ պայքարողը, հակառակորդին հաղթողը, լուսավոր ճա-ռագայթը, ազնվացեղ ճյուղը, պտղատու ձիթենին, նա-խանձելի վարքը, պարկեշտության օրինակը, արև-մուտքի նորատունկ ծաղիկը, արևելքի զարդարողը, գեղեցիկ կերպարանքը, աստվածաման միտքը, աղա-մանդե ամբոթյունը, որ հսկայացեղ բռնավորի անհա-մար գործությունը երիտասարդի նման պարտության էր մատնում, որի համար աստվածային Դավիթը եր-գում է. «Թագավորի դստեր ողջ փառքը ներսից և դրսից պատված է ոսկեհուռով»: Ինչու՞ չխոսել նաև նրա խելամիտ դայակ Գայանեի՝ պարկեշտության մոր, աստվածահաճո դաստիարակի, իմաստուն ուսուց-չի, անբեկանելի հոգու, անփոխարինելի խրատողի մա-սին, որ բռնավորի փաղաքշական պատրանքներից չէր պարտվում, այլ պահում էր իր շուրջը, խոսքերով խնդրում, սովորեցնում հաղթելու, քաջալերում էր գո-րանալու: «Ո՞վ իմ գեղեցիկ, -ասում է, -թերի է կյանքը, քո խոստումները սովոր են, իգուր են պատրանքները, գորացի՛ր Աստծու սիրո մեջ, գեղեցիկ է անմահ Փեսա-յին հարսնանալը, լավ է իմաստուն կույսերի հետ մտնել երկնային առագաստը»: Այսպիսի խանդաղա-տական խոսքերով է հորդորում կույսին՝ անխոնար-հելի մտքի դիտավորությունն ունենալով Աստծու մոտ մինչև մահը: Որով արի ճգնությամբ և հանդեսի վկայությամբ բոլորը դեպի Քրիստոսին էին ձգտում:

Եվ սրանից հետո ի՞նչ: Բռնավորը գորքերի հետ միասին ծանր հարվածներով պատժվում էր: Քանզի որ փոխված մարդկային բնությունից խոզի կերպարան-քի, ինչպես մի ժամանակ Ասորեստանի արքան՝ Դա-նիելի ձեռքով, ոչ թե օրինակով, այլ արդարությամբ, ոչ թե առասպելով, այլ՝ ճշմարտությամբ, գարշելի տեսքով, ողորմելի կերպարանքով, հանդուգն, աներես դեերի, խելագարների նմանված, իբրև վայրի խոզ՝ բնակված անտառում, ինչպես նրանք նրանց մեջ: Ար-դարև պատվի մեջ էր, և չիմացավ, այլ հավասարվեց անմիտ անասուններին (Մղմ. ԽԼ 13, 21): Այսպես սպառնում է Աստված նրանց, ովքեր հանդգնում են Իրեն հակառակվել: Այսպիսի հարվածներով խայտա-ռակում է իր պատվիրաններին չհնազանդվողներին:

Այժմ ու՞ր է քո թագավորական վեհությունը, ու՞ր է հպարտությունը, ու՞ր է խրոխտ գոռոզամտություն-ը, ու՞ր է գերապատիվ աթոռը, ու՞ր է արքայական թագը, ու՞ր է ոսկեզարդ բազմականը, ու՞ր է սքանչելի գործությունը, ու՞ր է անհաղթելի քաջությունը, ու՞ր են հզոր գորավարները, ու՞ր են բռնավոր պետերը, ու՞ր են ատյանի նախարարները, ու՞ր են զվարճախոսներն ու ծաղրածուները, ու՞ր է մահապատժի բեմը, ու՞ր է տան-ջարանը, ու՞ր են եռանդուն դահիճները, ու՞ր են չարն առաջ բերող մեքենաները, ու՞ր են և ձեր չաստվածնե-րը, որոնց հանդեպ դուք հույսով էիք, արդ պիտի կանգնեին և ձեզ թիկունք լինեին: Ինչու՞, ով հիմար-ներ, չեք լսում մարգարեին, որն ասաց Աստծու առաջ, «Տեսե՛ք, թե ես եմ, և բացի ինձանից ուրիշ Աստված չկա, որ սպանում և կյանք է տալիս, ծառայում և բժշկում է, թե որ առաջին խոսքով չխրատվեցիք, այժմ պիտի խրատվեք պատժիչ հարվածների ձեռ-քով»: Բայց ինչն է առավել, քան այն, որ կատարվեց Նաբուգոդոնոսոր արքայի հետ, չէ՞ որ և նրան իսկա-պես առաջինն էր պատվիրում և խրատում Դանիել մարգարեն: Բայց «Ինչպես իժ և քարք, փակելով իր ականջները, չէր լսում ճարտար թովչի ձայնը, և չէր ընդունում դեղն իմաստուն բժշկից» (Մղմ. ԾԷ 5-6), մինչև հենց արդարությամբ ընդունեց նախօրոք ճա-ռած պատժի խոսքը: Նույնպես և այստեղ պատահեց նրանց հետ Աստծու մեծ վկայի ձեռքով, որովհետև նրանք, որ չտեսան արևը նրա աստվածային խոսքի խրատից, անպատիվ եղան, ինչպես ջուրը, որ թափ-վում է, և տկարացան հզորի աղեղի լարելու ժամանակ, որի համար ուրախացավ արդարը՝ տեսնելով հատու-ցումը:

Եվ այնուհետև նրանք զղջանալով Տիրոջն էին խնդրում, երբ նրանց էր սպանում, ետ էին դառնում և առավոտից Աստծու մոտ էին լինում: Քանզի որ ճանա-չեցին, որ աստվածասատ է պատուհասը, անբուժելի՝ հարվածը, անհուսալի՝ ապականությունը, որով տարա-կուսանքների խորքն ընկած այնժամ հիշում էին Աստ-ծուն և նրա քաջ նահատակ Գրիգորին: Ո՞ւմն արդոք, [թե՛ ոչ] կալանավորին, բանտարկվածին, աղքատին, օտարին, տուն չունեցողին, բազում նեղություն կրա-ծին, մահվան դատապարտվածին, կենդանի թաղվա-ծին: Նրան էին հավատքով խնդրում, նրա ձեռքով էին հույս տածում բուժվել անբուժելի հիվանդությունից: Եվ սրբին որոնելով, ոչ թե մարդկայինն հույսով, այլ տեսիլքի հայտնությամբ, որ երևաց թագավորի քրո-ջը: Եվ իրոք, այնքան ժամանակներից հետո ինչու էին հույսով, թե նա կենդանի է այդպիսի անտանելի վայ-րում: Անակնկալ էր կատարվածը, անսպասելի զար-մանք, բայց Աստծու համար ամեն ինչ հնարավոր է: Ինչպես որ Հովանանը կենդանի պահվեց կետի փորում, և փրկեց

Պողոսին անդունդների խորքից, նաև այնտեղ խոր վիրապում մեծ Գրիգորին կենդանի պահեց: Որ նախքան փնտրողների դռները Տերը հայտնեց նրան հանդերձյալ կյանքի մասին ոչ մրկի միջից և ոչ էլ ամպի, այլ տեսիլքով երևում էր դեմ հանդիման, այն, որ միշտ նրա հետ էր, և նրանց երբեք չէր հեռանում, ըստ իր խոսքի թե՛ «Ով սիրում է ինձ, կպահի իմ խոսքը, և ես ու հայրը նրա մոտ կգանք և նրա հետ կօ-թևանենք» (Հովհ. ԺԳ- 23), և թե՛ «Ես ու՞մ եմ նայելու, եթե ոչ հեզերին ու խոնարհներին, և նրանց, ովքեր դո-դում են իմ խոսքից» (Եսայի ԿՁ 2): Որի համար բարե-գույն ու մարդասերը ձայնում էր իր նահատակին՝ ասելով, «Վեր կաց, որ ննջում ես, և կանգնի՛ր մեռել-ներից, և Քրիստոս քեզ լույս պիտի տա, վե՛ր կաց, իմ քաջ նահատակ, որ պարկեշտությամբը թշնամի բան-սարկուիմ տապալեցիր քո ոտքերի տակ, վե՛ր կաց, որ այս ասպարեզում մարտնչեցիր թշնամու դեմ, վե՛ր կաց, որ չարիքների գլուխ Բելիարին ոտքի տակ գցե-լով մեռցրիր, վե՛ր կաց, դու իմ եկեղեցու հաստատուն սյուն, և տիեզերքի պարծանք, վե՛ր կաց, դու ուղղափա-ռության ուսուցիչ և աշխարհի գեղեցկություն, վե՛ր կաց, դու հավատքի խոսք և մարդկանց [դեպի] արքա-յության ճանապարհ առաջնորդող, վե՛ր կաց և գորա-ցի՛ր, վե՛ր կաց և քաջությամբ պնդացրու քո մեջքը, չընկղմվեցիր բազմահոս ալիքների մեջ, արթնացի՛ր և սթափվի՛ր, որովհետև ահա քո մանկությունը, ինչպես արծիվ պիտի նորոգվի, վե՛ր կաց և քարոզի՛ր իմ Ավետարանը, որի համար բազմիցս կրեցիր չարչա-րանքների գրկանքներ: Վե՛ր կաց և ուրախացի՛ր, քանի որ քեզ մեծ ազգ պիտի անեն, ինչպես նախապես Աբ-րահամին, վե՛ր կաց և ընդունի՛ր քո վաստակած պտու-ղը, որի համար երկարեցրի քո բազմապատիկ տան-ջանքների նեղությունը: «Որովհետև բազում ազգերի հայր եմ դարձնելու քեզ» (Ծննդ. ԺԷ 5), և «Պիտի բազմացնեմ քո սերունդը, երկնքի աստղերի և ծովեզերքի ավազի չափ» (Ծննդ. ԻԲ 17): Մի՛ կարծիր, թե մի օտար հայտնություն արեց քեզ համար, բայց այդ [արեց] միայն նրա [համար], որ արդար երևաս, որ փառավոր-վես, որպեսզի հրեշտակների և մարդկանց մեջ նշանա-վոր լինես: Կար հնար քեզ պատկերու միայն այս ասպա-րեզի ընթացքի մեջ, բայց դա շատերի վտանգման մի-ջոց պիտի լիներ: Այս պատճառով քո ներությունների համար երկար սպասեցի, որպեսզի քեզ արժանացնեմ բարձր փառքի, որովհետև վերստին ավելի պատվի և փառքի պիտի բարձրացնեմ: Ընդունեցիր նահատակու-թյան պատկը, և այժմ պիտի ընդունես հայրապետա-կան աթոռը: Բարձրացա՛ր Եղիայի հետ առաքինու-թյան կառքով, և այժմ ընդունի՛ր կանխատեսության շնորհը: Ամենադաժան անապատում ճգնեցիր Հովհան-նեսի հետ, նրա հետ և դու գոչի՛ր բարբառի ձայնն անապատում: Բանտի կապանքներում տանջվեցիր Պո-ղոսի հետ, ընդունի՛ր նրան նաև խոսքի անխափան քարոզությունը տիեզերքում: Պետրոսն առավ արքա-յության բանալին Ինձանից, և դու ա՛ն մույն իշխանու-թյունը՝ կապելու և արձակելու երկնքում ու երկրի վրա: Ի՞նչ տաներկու առաքյալներն իրենց մեջ [առան-ձին] վիճակների բաժանեցին ընդհանուր աշխարհը, մինչդեռ դու միայնակ [լինելով] համատարած պիտի քարոզես իմ Ավետարանը: Որի համար ընդունելով իմ մարդեղության անունը՝ տիեզերքի արդարության արեզակ պիտի կոչվես:

Այնժամ կաղն իբրև եղջերու վազում էր, և ծան-րախոսի լեզուն պարզվում էր: Հետ չէր մնում և չէր երկմտում, այլ փութով գնում էր Տիրոջ կանչին [ունկնդիր]: Քանի որ նախօրոք ճանաչում էր կանչողի գորությունը, հավատում էր Աստծուն և Նրան արդար էր համարում, ցնծությամբ ուրախանում էր, հոգեպես հրճվում, խորհրդավորապես պարում, աղաղակում էր ուրախալի ձայնով՝ առ Աստված ասելով, Այս այն օրն է, որ Տերն արեց, եկե՛ք ուրախանանք և ցնծանք սրա-նում:

Այն ժամանակ բռնավորը ևս, գազանների միջից դուրս գալով, վազում էր նրան ընդառաջ, որ ինչ-որ ժամանակ թագավոր այժմ անտառի խոզ էր՝ զարշելի տեսքով, զզվելի կերպարանքով, կատաղի չարու-թյամբ, դիվահար բազմությամբ հանդերձ, փրփրելով և անձը կոծելով, սրբի ոտքերն էր ընկնում, աղերսա-զին խանդաղատանքով պտտվում էր նրա շուրջը, տես-քով [կարծես] ողորմություն էր խնդրում, կերպավոր-րում հայցումը, մինչև որ Քրիստոսի նահատակն ըն-կավ իր երեսի վրա, երկրպագում էր Տեր Աստծուն, և աչքերից արտասուքի աղբյուրներ թափելով, գոհա-նում էր Տիրոջից, ուրախալի սրտով ասելով՝ «Լստ իմ սրտի բազմաթիվ ցավերի քո մխիթարությունն ուրա-խացրեց իմ անձը, և ով պիտի խոսի քո գորության մասին, Տե՛ր, ով ժայռը դարձրեց ջրի վտակ և ապա-ռաժն՝ աղբյուրի ակունք (Մաղմ. ԾԺԳ- 8): Որովհետև ահա և այժմ այս ժողովրդի սրտի կարծրացումը քո բարկության կրակով կակղեցրիր մոմի նման, որ և նրանց դունչը ճմլելով սանձի և պախուրցի տակ, են-թարկեցիր քեզ, «Տե՛ր, կարող ես և քարերից Աբրահա-մի որդիներ դուրս բերել», որի համար խնդրում եմ քո անսահման մարդասիրությունը, Տեր իմ Հիսուս Քրիստոս, Միածին Որդի և Բան մշտնջենավոր Հոր, բոլորի Տեր և արարիչ ամենայնի, որ Խաչի վրա բարձ-րանալով կապեցիր հզորին, իսկ մեզ՝ կապվածներիս, շնորհեցիր հավիտենական ազատություն, այժմ գթա՛ և մեզ՝ քո ձեռքի ստեղծածներին, տու՛ր քո բազկի գո-րությունը և ազատի՛ր այս ժողովրդին թշնամուն ծա-ռայելուց, հայտնապես ցույց տալով, թե դու ես միայն կենդանի և մշտնջենավոր Աստվածը, և անմահ Թագա-վորը՝ հզոր ու հավիտենական: Արդ, բժշկի՛ր սրանց, Տե՛ր, քո հարվածների բարկությունից՝ տեսնելով քո ծառայի խոնարհությունը, և ինձ շնորհի՛ր իմաստու-թյան խոսքը, որպեսզի քո գորության միջոցով կարո-դանամ սրանց հեռացնել դևերին ծառայելուց և քեզ նվիրելու որպես Տեր Աստծու սեփական ժողովուրդ:

Եվ Տերը, նկատելով սրբի աղաչանքները, նույն պահին դիվական հիվանդությունից բոլորին բուժում շնորհեց, ինչպես նաև թագավորին՝ մարդու նման խելք և խոսք:

Եվ նրանց հետ շտապ գալով ուզում էր տեսնել Աստծու վկաների նշխարները: Եվ տեսնելով՝ ուրախու-թյամբ հավաքում և մեծ պատվով ամփոփում էր պատվական գանձերը հնձանի տեղում: Ուր և ինքը վանք կառուցելով, բազմաթիվ ժողովրդի և թագավոր-րի հետ միասին, սկսեց նրանց սովորեցնել արարչու-թյան սկզբից մինչև հավիտենական վախճանը, որ մենք մեկ առ մեկ չենք կարող պատմել, քանի որ այն այրը շատ իմաստուն էր հոգևոր գիտությանը և լի աստվածային շնորհներով: Բայց [այս արեց] թերևս ճանաչել տալու անձը Աստծուն և բոլոր արարածների լինելությունը, մարդու գոյանալը, շնորհի պարգևը, անձնիշխան կամքը, դրախտի փափկությունը, բոլոր-րին, երկնքի ներքո եղած բոլոր բաներին թագավորե-լը, թշնամու նախանձը, կնոջ անհավատարմությունը, պատվիրազանցությունը, նախնյաց ցանկալի վայել-չությունից հրաժարվելը, մահվան դատապարտվելը, ապա մեղքի մեջ շատանալը, Աստծուց օտարացումը, աստվածապաշտության նվազումը, կործանումը ջրհե-ղեղով, միայն Նոյին ընտրված գտնելը, աշտարակի կառուցումն ու կործանումը, դևերի բազմաստվածու-թյունը, տիեզերքում կռապաշտության բազմացումը, Աբրահամի հավատքը, Իսրայելի ծառայությունը, հարվածներ Եփրատովին, փարավոնի խստասրտու-թյունը, ծովի բացվելը, ժողովրդի անցումը, փարավոն-ի և գորքի խորտակումը, անապատի

գեղեցկություն-ը, մովսիսական քարոզը, գրված օրենքը, Ավետյաց երկիր տեղափոխվելը, մարգարեների գուշակություն-ը, Քրիստոսի գալուստը, տնօրինական խորհուրդը, խաչվելը որ մեզ համար եղավ, փաստացի մահը, քաղ-վելը գերեզմանի մեջ, երրորդ օրում հարություն առ-նելը, մեզ սատանայից փրկելը, մահվան գործքանն հաղթելը, Հոր մոտ երկինք համբարձվելը, Սուրբ Հոգու էջը վերնատան մեջ, աստվածապաշտության աճը, առաքյալների քարոզությունը, [Իր] երկրորդ գալուստը նախկին փառքով, ողջ տիեզերքի հարությունը և հավիտենական դատաստանի անաչառ վճիռը: Այս ամենով՝ մեծ գիտությանը և ճոխ վարդապետութեամբ, ըստ ժամանակի պահանջների, Աստվածաշունչ գրքի վկայություններով և օրինակներով գործացնում էր նրանց:

Սրանից հետո վերստին [ինչեցին] մաղթանքի խնդրանքներ երանելի [Գրիգորին] հարվածողներին, և նրա սրտառույ պաղատանքները Տիրոջը՝ նրանց բժշկության համար, որով առանց հապաղելու ընդունեցին հայցվածը: Բանգի նրա աղոթքների միջոցով պատժիչ հարվածներն անհապաղ վերցվում էին բոլոր-րի վրայից, և Աստու խաչի նշանով մկրտելով այր թագավորին, նույն պահին թոթափեց խավարային զգեստը, ձեռքագտնվեց նա անասնակերպ տեսքից, որ կրեց մեղքին դատապարտված լինելով և հազավ առաջին վայելչական կերպարանքը, մանավանդ՝ ավելի ևս զարմանալի և հրաշալի: Ինչպիսի՝ մեծ գործ, ինչպիսի՝ անըմբռնելի հրաշք: Իրոք ո՞վ պիտի պատմի Քո գործքան մասին, Տեր, կամ թվարկի Քո հրաշքները: Որովհետև ո՞վ է տեսել կամ լսել նույն վայրկյանում այնքան դաժան հարվածները բժշկել: Իրոք Տերը կա-տարում է իր երկյուղածների կամքը և լսում նրանց աղոթքները: Իսկ երանելին ոչ թե անձին, այլ Աստծուն էր ընծայում փառաբանությունը՝ ասելով. «Բարձրյալ-ի աջի այս փոփոխումը», և թե՛ «Տիրոջ աջն ստեղծեց գործքանը»:

Ապա և այն ժամանակ Տրդատ թագավորը, քանի որ այս էր անունն արքայի, ջերմեռանդ հավատքով և բարձրագույն ճայնով խոստովանում էր մեր Տեր Հիսուս Քրիստոսին, որպես ճշմարիտ Աստծու և Հոր Բանի, բոլոր տեսանելի և անտեսանելի արարածների Ստեղծիչ: Քարգում էր խաչված Աստծուն, երկրպագում էր կենդանի աստվածակիր սուրբ Խաչին, հայտնի կերպով հրաժարվում էր դիվապաշտ անօրենություն-նից: Այնուհետև այս հավատքին լինում էր մեծապես զորավիգ, օգնական և վրեժխնդիր ուղղափառության մեջ, ինչպես որ Պողոսը Դամասկոսի ճանապարհին Քրիստոսի երևումից և աչքերի կուրացումից հետո: Այլև գործերով իր անձի մեջ ցույց էր տալիս, Պողոսի կողմից ասվածը, թե՛ «Ուր մեղքը շատացավ, այնտեղ առավել ևս շատացավ Քրիստոսի բարեպաշտության շնորհները» (Հռոմ. Ե 20): Նաև ժողովրդի գործի բազմությունը քայլեց Սուրբ Հոգու շնորհներով, միա-ձայն լինելով արքայի հետ՝ բարձրաձայն գոչում էին՝ «Մեծ ես դու, Տեր» (Մաղմ. ՉԹ 10), և «Հզոր և սքանչելի եմ գործերը քո» (Մաղմ. ՃԼԸ 14): Այս պատճառով հա-վատում ենք քո Ամենասուրբ Երրորդությանն ու մեկ Աստվածությանը, ինչպես լսեցինք և սովորեցինք մեր Լուսավորչի վարդապետությունից, որից ընդունե-ցինք նաև մարմնի և հոգու բժշկությունը, հեռացանք բազմաստվածության մոլորությունից:

Սրանից հետո արքայն՝ զինված սուրբ նահատակ-ներով և հավատացյալների գործով հանդերձ, հակա-ռակ զարշելի կուռքերի, կործանելով բոլոր ոսկեզարդ կուռքերը բաշխում էին աղքատներին: Եվ նրանց դե-րով բնակված մեծիանները հիմնովին տապալելով Քրիստոսի խաչի նշանով հողին էին հավասարեցնում, և նրանց տեղերում հիմնում Աստծու գեղեցիկ տաճար-ներ, նույնպես և՛ սուրբ մարտիրոսների՝ գեղեցիկ կույս Հռիփսիմնի, Գայանե մեծ վկայուհու և ընկեր-ների նահատակության վայրում: Բազմաթիվ վկայա-րաններ էին կանգնեցնում, ըստ Տեր Աստծու ցույց տված տեսիլքի: Մաքրվում էր երկիրն այս պղծու-թյուններից, շրթայակիր Գրիգորից հալածվելով դեռն հայտնապես աղաղակում էին մեծաձայն վայ-նասունով:

Արդ, սրանից հետո ի՞նչ էր անհրաժեշտ, մյուս անգամ ծննդյան վերստին նորոգում, որովհետև եթե՛ «Մեկը ջրից ու հոգուց չձմվի, -ասաց Փրկիչը, -չի կա-րող Աստծու արքայությունը մտնել» (Հովի. Գ 5): Իս-կապես ինչո՞ւ ես հապաղում դու՛ Աստծու մարդ: Մոտե-ցիր և գործելով Քրիստոսի միջոցով քո հավատա-ցյալներին քեզ համար հոտ պատրաստիր: Նրանց տուր փրկության դրոշմը, Տիրոջ ժողովրդին հաստա-տիր Տերունի նշանի մեջ մկրտության ձեռքովդրանց զգեստավորիր Քրիստոսով, պատրաստիր նրանց, որ-պես Տիրոջ սեփական ժողովուրդ: Որովհետև ահա ավանդվեց Ավետարանի խոսքը, հաստատվեց ճշմար-տությունը, փառավորվեց Աստված, թշնամին ամոթով եղավ, սատանան կործանվեց, Բելիարը պարտվեց, դե-րի հարվածներից բժշկվեց քո ժողովուրդը, ամենքն ընթացան Քրիստոսի օրենքով: Արդ, ինչո՞ւ ես վերս-տին հապաղում, ինչո՞ւ ես տակավին երկմտում, ինչո՞ւ ես արդյոք դանդաղում: Մկրտիր բոլորին, լուսավորիր ճշմարիտ լույսով, նորոգիր վերստին ծննդյամբ:

Արդ, այսպես էր խնդրում թագավորը, Սրբի ոտքերն էր ընկնում, պաղատում էր: Իսկ երանելին չէր ախորժում և չէր համաձայնում աղերսական մաղ-թանքներին: Չեմ համարձակվում, -ասում է, -հանդըզ-նել այն աստիճանին, որն առավել է, քան ես: Ես բա-վական չեմ կրելու տերունական լուծը, չեմ կարող բա-նավոր հոտի վերաբերյալ հաշիվ տալ Քրիստոս հովվա-պետին, որի համար խոնարհվեց երկնքից դեպ երկիր, որի պատճառով մեռավ, թաղվեց և իր արյամբ ազա-տեց ամենքին մեղքերի ծառայությունից: Տեղյակ եմ Իր ոչխարների վրա ունեցած սիրո մասին, տեղյակ եմ նաև հարությունից առաջ Պետրոսին տված պատվերի [մասին]՝ «Պետրո՛ս, -ասում է, -թե սիրում ես ինձ, արածեցրո՛ւ իմ ոչխարներին» (հմմտ. Հովի. ԻԱ 16, 17): Որովհետև մեծագույն է պատիվը, սակայն դժվա-րակիր է բեռը: Իրագեկ եմ նաև այնտեղ կանչվելուց Մովսեսի հրաժարվելու մասին: Այս պատճառով ար-ժանի չեմ այդ աստիճանին, և պիտի չլինեմ հոտի վե-րակացում, որոնց արյունը պահանջելու եմ հանդեր-ձյալ հավիտենականության մեջ: Այսպես ասելով երա-նելին առանց թաքցնելու հրաժարվում էր:

Ո՞վ դու քաջ, ինչ՞ ես անում, ինչո՞ւ ես վեհերոտ գտնվում Բարձրագույն պատվի հանդեպ: Համբերող եղար նեղություններին, անտանելի տանջանքներ կրե-ցիր, դիմացար այրվող կապարին, տոկացիր անտանելի չարչարանքներին, բնակվեցիր ամենադաժան գա-զանների հետ, քաղցով զրկանքներ կրեցիր, բազում տարիների կոշտությունը երկրագործելով փխրեցրիր, փուշն արմատախիլ արեցիր, նորատունկ այգին պղտ-դաբերության հասցրիր, այժմ դանդաղում և հրաժար-վո՞ւմ ես: Այո՛, ասում է, քանզի դողում եմ Տիրոջ սար-սափելի հրամանից՝ մարգարեի միջոցով ասված. «Մարդու որդի, քեզ դետ կարգեցի իսրայելի այդ տանը, որովհետև եթե չզգուշացնես, -ասում է, -նրանց արյունը քեզնից եմ պահանջելու» (Եզեկ. Գ 17, 20): Գիտեմ նաև, որ եթե մեկը փափագում է Աստծու և մարդկանց միջև միջնորդ լինել, պարտավոր է նման-վել հովվապետ Քրիստոսին, ըստ Պողոսի խոսքի, թե՛ «Նմանվեցե՛ք ինձ, ինչպես որ ես՝ Քրիստոսին»: Ար-դյոք ինչպիսի՞ նմանությամբ: Որովհետև ասում է, «Ամենքին

օգտակար եղաւ, որովհետեւ չեն փրկարում միայն իմ օգուտը, այլ՝ շատերինը, որպէսզի փրկվեն» (հմմտ. Ա Կորնթ. Ժ 33): Նույնպէս նաև՝ «Իմ կյանքը կտամ ոչխարների համար» (Հովհ. Ժ 10): Ով աստվածասեր հոգի, ով մեծագույն խոնարհություն, ով մեծ առաքինություն: Այստեղ կատարում էր Տիրոջ հրա-մանը. «Երբ կատարեք բոլորը, ասացեք, թե՛ անպիտան ծառաներ ենք» (Բուկ. ԺԷ 10): Նաև Պողոսի մնացած բար-բառում էր. «Ինքս իմ մասին բան չգիտեմ, բայց սրա-նով չեն արդարանում, որովհետեւ նա, որ դատում է ինձ, Տերն է» (Ա Կորնթ. Գ 4): Եվ սրանից հետո ի՞նչ պիտի լինէր, կամ ինչպիսի տարակուսելի գործ պիտի ցույց տրվէր Տիրոջ կողմից: Գիշերը տեսիլքով հայտնվեց նրան և ասաց. «Վեր կաց, իմ քաջ նահա-տակ, բարձունքներից հագի՛ր գործությունը, գորավիզ եղի՛ր և ընդունիր քահանայապետության աստիճանը: Դու անպիտան ես համարում քեզ, ես քեզ իբրև շատ պիտանի մեկը պատկեր պիտի արժանացնեմ: Դու իջնե-լով խոնարհվում ես, մեծ փառքով ես պիտի բարձրաց-նեմ քեզ: Չեմ խափանելու վճիռն ըստ քո կարծիքի: Վեր կաց, հագի՛ր քահանայի արդարությունը և մկրտի՛ր իմ ժողովրդին: Դու իմ ավետարանի կարա-պետ, դու մկրտող, դու բարձրյալի մանուկ մարգարե պիտի կոչվես, պիտի գնաս իմ առջևից՝ պատրաստելու Տիրոջ ճանապարհը, տալու իմ ժողովրդին ճշմարիտ գիտություն և նրանց բոլոր մեղքերին թողություն: Եվ ահա, «Ես ուղարկում եմ իմ հրեշտակին քո առ-ջևից, որ քո առջև բացի քո ճանապարհը» (Բուկ. Է 27): Այսուհետև էլ ի՞նչ պիտի ասես, ով դու երանելի, կա՞ որիչ որևէ արդարացի պատասխան: Եթե քո խոսքերը պիտի հավանես, մայիր դեպ կանչողի մեծությունը: Ինչու՞ ես իրոք հապաղում. Աստված է, որ արդարաց-նում է, իսկ ո՞վ է, որ պիտի դատապարտի արդարին: Ո՛չ, ասում է, հակառակվելու այլ պատճառ չունեմ: [Ընդամենը] մեկ անգամ խոսեցի, երկրորդը պիտի չավելացնեմ: Ահավասիկ պատրաստ եմ հնազանդվելու Տիրոջ հրամանին՝ վստահ լինելով Նրա գործարարը: Ես տկար եմ և ունայն, Նա հզոր է: Ես ծուլ եմ, իսկ Նա արագ օգնելու մեջ: Գիտեմ պատրաստ է վերցնելու իմ տկարությունը, գիտեմ, որ լցնում է իմ պակասության թերին:

Այսպես եմ ես գովում հովվին, այսպես վերականգնում, ողջունում եմ նրա տկարությունը, ընդունում եմ նրա բոլորությունը: Որովհետև ոչ թե նա պատվի հետ, այլ պատիվն է նրա հետ քայլում: Որովհետև փառք չէր փնտրում, այլ՝ փառքից փնտրվում: Այսպես վայել է քահանայապետին, ըստ Պողոսի. «Սուրբ, ան-բիծ, անարատ, գատված մեղավորներից և բարձրացած ավելի վեր, քան երկինքները» (Եբր. Է 26): Որովհետև ով այդպիսին չլինի, չի կոչվելու հովիվ, այլ՝ գող, ավազակ և ապականող գայլ՝ հոշոտելով Քրիստոսի հոտը: Ընդ որում և մեզ երևացին այս ճշմարտության հակառակորդները, ոչ միայն գայլերը, այլ նաև չարերն ու ամբարիշտները, թշնամիներն ու դավա-ճանները, հայիտողներն ու կեղծավորները, պիղծերն ու սուտ վարդապետները, կույր առաջնորդներն ու մոլորեցնողները, նեղերն ու հոգու դեմ մարտնչող-ները, որոնք թշնամացնում են Հոգու շնորհների հետ: Որոնց թույլ չի տա թե՛ այժմ, այս ժամանակի հավի-տեմականության մեջ, թե՛ հանդերձյալ կյանքում: Գրանց միշտ հայիտում է ճշմարտության ճանապարհ-ը: Ուստի եթե հաճելի է, պետք է և արժան է նախ և առաջ խոսել այսպիսի խոսքով, իսկ ապա ավարտել մեր երանելի հոր ներբողական ճառը:

Հովվապետին է դատաստանը, քահանայապետին՝ տոնախմբությունը, պետք է առանձնացնել գայլերին հովիվներից նրա հետ և փառքի պատիվը՝ մի փոքր հիշատակելով նաև մեր ցավը: Քանզի արդեն հասել է [այս] հավիտյանների վախճանը: Շատացավ անօրենու-թյունը, նվազեց սերը, մոլորեցնողները շատ են և առավել ևս մոլորվածները: Ուրեմն, այստեղ բեր բա-ցենք աստվածային գիրը, ուր պիտի գտնենք ճշմար-տության ճանապարհը: Քանի որ մեր երանելի հորը տեղ տալը, մեզ պիտի տանի խոսքերի խորքերը: Այ-սուհետև քայլենք սուրբ լեռների վրայով, ասում եմ մարգարեների և առաքյալների միջոցով, և պիտի գգուշանանք, որպէսզի չմոլորվենք վարդապետու-թյան ամեն մի հողմից, և չմնանք ներքևում, այլ Բա-նի [Տիրոջ] աշակերտների հետևից պիտի բարձրա-նանք լեռան վրա, և լսենք, թե ինչ է խոսում մեր քաջ հովվապետ Քրիստոսը. «Ձգո՛ւյ՜ կացեք, -ասում է, -թո՛ղ որևէ մեկը ձեզ չխաբի»: Ըստ Պողոսի՝ «Ձգո՛ւյ՜ եղեք խոսքերից, գգուշացե՛ք չար մշակներից», և ապա՝ «Տեսե՛ք, թե ուր եք գնում», և վերստին ասում է. «Ձգուշացե՛ք ոչ միայն անձերից, այլև՝ ամբողջ հոտից»: Եվ արդ, ես փոքրից ավելացնեմ Տիրոջ, առա-քյալների և մարգարեների խոսքին: Եվ սկսեմ այտե-ղից, որ ասում է. «Ես եմ սկիզբն ու վախճանը»: Այլ մի կողմ թողնելով կենցաղական հոգսերը՝ ուղղեք ձեր միտքը դեպ ինձ: Աստվածային բերանով մեր Տերն ասաց. «Ձգուշացե՛ք, որպէսզի չխաբվեք, որովհետև շատերը պիտի գան իմ անունով և պիտի ասեն՝ ես եմ Քրիստոսը, և շատերին պիտի մոլորեցնեն» (Մարկ. ԺԳ 5, 6), նաև՝ «Ձգուշացե՛ք սուտ մարգարեներից, որոնք մոտենում են ձեզ ոչխարների զգեստներով, բայց ներ-սից հափշտակող գայլեր են, իրենց գործերից պիտի ճանաչեք նրանց» (Մատթ. Է 15, 16), այսինքն՝ սուտ մարգարեությունից, կեղծավորությունից, ազահու-թյունից և հայիտությունից: Արդ՝ թող ձեզանից ոչ մեկը չերկմտի կամ անտեղի լսի խոսքը, քանի որ Աստված է, որ խոսում է: Ուրեմն, հովիվներ, լսեցե՛ք հովվապետի ձայնը, լսեցե՛ք և գգուշացե՛ք ձեր հոտից, «Որովհետև ով ոչխարների փարախը դռնով չի մտնում, նա գող է և ավազակ» (Հովհ. Ժ 1), և դարձյալ՝ «Ով ինձ հետ չէ, հակառակ է ինձ» (Բուկ. ԺԱ 23), ուրիշ տեղում՝ «Դուք իմ այն ոչխարներից չեք» (Հովհ. Ժ 26): Տեսնում ես, թե ինչպես է ամենուր հաստատում խրատները, որպէսզի մենք չմոլորվենք: Ո՛վ անճա-ռելի մարդասիրություն, ո՛վ անտանելի խոնարհու-թյուն: Այս ամենի համար, որպես տուրք, ի՞նչ պիտի տանք Տիրոջը, կամ ի՞նչ պիտի պատասխանենք մեր հովվապետին: Ո՛վ հովիվներ և հովակիցներ, նա քանի՞ անգամ մեզ պատվիրեց գգուշանալ գողերից և ավա-զակներից, և ոչ միայն ավետարանով, այլ մարգարե-ների և աստվածախոս աշակերտների միջոցով ևս ասաց: Ամենքի հետ խոսում է այնպես, ինչպես որ կա-մենում է: Եվ վկայում է ինձ Պողոսն՝ ասելով, թե՛ «Ինչ-չու՞ եք կամենում փորձել Քրիստոսին, որ ինձնով խո-սում է ձեզ հետ»: Եվ արդ, այսուհետև ձեզ համար պի-տի մեջբերում անեմ աստվածաբանների խոսքերը: Լսենք նրանց, թե ի՞նչ են, իրոք, պատվիրում մեզ:

Խոսիր, ո՛վ դու երանելի Պետրոս, խոսիր պա-մ-ծայի գլուխ, որին ընտրեց մեր Տեր Հիսուս Քրիստոսը, ասա՛ մեզ նրանց մասին, ովքեր պատրաստ են շեղելու Քրիստոսի հոտը, որն ավանդեց քեզ մեր անձերի հովվապետն ու տեսուչը և շնորհեց Սուրբ Հոգին: Պետ-րոսն ասում է. «Նախ այս իմացեք, որ այս վերջին օրե-րին պիտի գան արհամարհողներ, որոնք պիտի ընթա-նան ըստ իրենց ցանկությունների» (Բ Պետ. Գ 3): Եվ ապա՝ «Ձեր մեջ կարող են լինել սուտ ուսուցիչներ, որոնք կորստաբեր հերձվածներ են ներմուծելու, և շա-տերը պիտի գնան նրանց անառակությունների ետևից, որոնց դատապարտությունը սկզբից հայտնի է, և նրանց կործանումը պիտի չուշանա: Անե՛ծքի՛ որդի-ները, թողնելով ուղիղ ճանապարհը՝ մոլորվեցին» (հմմտ. Բ Պետ. Բ 1-4, 15): Այս է ասում երանելի Պետրոսը՝ հավատքի ճշմարիտ վեճը, այն ամբողջու-նը, որի վրա Քրիստոս կառուցեց իր եկեղեցին: Պետ-րոսը, որ

ընդունեց երկնքի բանալիները, որ մեծ զո-րությամբ այն Սիմոնին գետնին տապալելով կործանեց, բոլոր Քրիստոսին հավատացյալների ավագն ու վերակացուն է: Իսկ ի՞նչ է ասում Տիրոջ սիրելի Հովհաննեսը. «Բազում մոլորեցնողներ են եկել աշխարհ, մի՛ հավատացեք ամեն մի հոգու»: Եվ դարձյալ. «Ամեն մի հոգի, որ չի մնում Քրիստոսի վարդապետության մեջ, չի ճանաչում Աստծուն (Բ Հովհ. Ա 9)»: Այսպես, Որոտման որդի Հովհաննեսը, որ սիրելին էր սրբերի մեջ, ողջ աշխարհում հնչեցրեց Ավետարանի խոսքը: Նրա հետև և Հակոբոս առաքյալն ասում է. «Ով կամենում է նրանց բարեկամ լինել, Աստծուն իրեն թշնամի կդարձնի» (Հակոբ. Գ 4): Իսկ Հուդան [ասում է]. «Վերջին ժամանակներում պիտի գան ծաղրողներ, որոնք պիտի շարժվեն իրենց ցանկություններով, սրանք հող-մակոծ անջուր ամպեր են, ծովի կատաղի ալիքներ, մո-լոր աստղեր, որոնց համար է պահված հավիտենական խավարը» (Հուդա. Ա 12, 13): Այս և սրանից ավելին է պատվիրում Հուդան: Եվ սրանից հետո, ո՞վ ընտրյալ անօթ, և դու մեզ ասա այս չար հավիտյանների մասին: Պողոսն ասում է. «Ես գիտեմ, որ իմ մեկնելուց հետո ձեր մեջ կգան հափշտակիչ գայլեր, որոնք չեն խնայի հոտին» (Գործ. Ի 28): Տեսնու՞մ ես թե առաքյալների և թե մարգարեների, տեսնու՞մ ես ամեն տեղ աստվածա-բանների խոսքերը միաբանված են վարդապետի հետ: Քանի որ կրկին ասում է. «Չգույշ եղեք, այս օրերը չար են», և թե՛ «Չար և խաբեբա մարդիկ չարից այն կողմ էլ պիտի գնան, իրենք մոլորված՝ պիտի մոլորեցնեն ուրիշներին» (Բ Տիմոթ. Գ 14), նաև՝ «Նրանց աստ-վածը իրենց որովայնն է, և փառքը՝ իրենց ամոթը» (Փիլիպ. Գ 19): Այսպես էր պատվիրում Պողոսը, նա, որ եկեղեցու երգարանն է, աստվածախոս նվագարանը, Քրիստոսի խոսքը, աստվածային խոսքի փողը, ճշմարիտ ճարտասանը, հեթանոսների դրսորդը: Արդ, պիտի համոզվե՞ք ձեզ այս խոսքերով, թե՞ իզուր ենք ջանք թափում: Բայց թեկուզ ոչ բոլորը, սակայն ջերմե-ռանդների բարության համար չեմ խափանելու այս գործը: Քանի որ սուրբ մարգարեները նախօրոք գու-շակեցին սուտ ուսուցիչների և ավելորդ հետաքրքր-րասեր հովիվների մասին, այս պատճառով Դավիթն ասում է. «Ճշմարտություն չկա նրանց բերաններում, և իրենց սրտերն ունայնացած են» (Մաղմ. Ե 10), և այսպես Աստված ասում է մեղավորին. «Իսկ դու ինչու՞ ես պատմում իմ արդարության մասին, կամ բերանդ չես առնում իմ ուխտը» (Մաղմ. ԽԹ 16), նաև՝ «Գողերի հետ էիր ընթանում և ընկերանում շնագողներին» (Մաղմ. ԽԹ 18):

Արդ, արդյոք ու՞մ համար է քարոզում մարգարեն հովիվների և վերակացուների հետ, եթե ոչ քո, որովհետև Աստծու պատգամը հենց մենք ենք քարոզում՝ ունենալով քահանայության աստիճան: Եվ ինչու՞ շուն չկոչվի այն, որ Աստծու իրավունքներին հակառակ շարժեց իր լեզուն և շնացավ՝ ոչ թե մարմով, այլ՝ հոգով, որովհետև իմ կենդանության օրոք տիրացավ աթոռիս: Բայց մենք առաջ գնանք: Դավիթը կրկին նույն բաների մասին ասում է. «Նրանք, ովքեր ընտրվել են արծաթով, պիտի անարգվեն»: Իսկ Մողո-մոնը խրատում է՝ ասելով. «Որդյա՛կ, թող չխաբեն թեզ ամբարիշտ մարդիկ՝ արդարի արյունը խառնելու նրանց հետ» (հմմտ. Առակ Ա 10, 11): Աստված Եսայու ձեռքով, երկինքն ու երկիրը որպես վկայություն դա-տասանով կնքեց Իսրայելի հետ, թե՛ «Լսիր, երկինք, և ակամեջ դիր, երկիր, որովհետև Տերը խոսեց» (Եսայ. Ա 2): Եվ ըստ կարգի մեկ առ մեկ հայտնելով նրանց խստասրտությունը՝ բարկության վերջում ասում է. «Ամեն գլուխ ցավի մեջ է և ամեն սիրտ՝ տրտմության: Ոտքերից մինչև գլուխ առողջ տեղ չկա, վերքերի, այ-տուցների և շարավոտ խոցերի վրա» (Եսայ. Ա 5): Ինչ-չո՞ւ, քանի որ այն ժամանակ է կոչվում վերք, երբ մարմնի այլ մասը առողջ է լինում, և մի մասով ան-զգայանանում է վերքի հանդեպ: Իսկ եթե բոլոր ան-դամներով վիրավորվի, դրանից հետո օգտակար չեն լինի ոչ ձեռքը, ոչ վիրակապը, և ոչ էլ սպեղանին՝ վրան դնելու համար:

Եվ արդ, լսե՛ք, հովիվներ, և զարհուրե՛ք, մի՛ լռեք խոսքից, այլ քարոզե՛ք համարձակությամբ: Սատանա-յին տեղի մի՛ տվեք: Նմանվե՛ք մեծ Պետրոսին, թե ինչ-պես մեծ բարկությամբ աստեց գարշելի Սիմեոնին, երբ փորձում էր Աստծու շնորհները արծաթով ստա-նալ: Որ կաշառքով հանդերձ նզովված՝ կորստյան մատնեց: Ընդունե՛ք և աստվածագիր Պողոսի խրատը Տիմոթեոսին. «Չեղբջ շտապով որևէ մեկի վրա մի՛ դիր, -ասում է, -որպեսզի ուրիշների մեղքերին մաս-նակից չլինես» (Ա Տիմոթ. Ե 22): Լսեք նաև Տիրոջ խոսքը. «Մի՛ տվեք սրբությունը շներին և ձեր մար-գարիտները խոզերի առաջ մի՛ գցեք, որն Աստծու խոսքի մաքրությունն է» (Մատթ. Է, 6): Դարձյալ, թե՛ «Նմա՛ն եղեք քաջ հովիվներին, քաջ պատերազմողներ-րի առաքինությանը և եկեղեցու առաջին վերակացու-ներին»: Թեպետև շատ տարբերություն են տեսնում այն երանելի աշխարհի և այս ժամանակում կոչված հո-վիվների ու վերակացուների միջև: Նրանք քաջ պա-տերազմող են, իսկ սրանք փախչում են հոգևոր պա-տերազմից: Նրանք աստվածային գրքի ընթերցման, գիտության և կրոնի նախանձավոր են, իսկ սրանք՝ հագուստներով պճնագարդված և արծաթասեր ու միայն դրանցով ընկերներին գերազանցել փութացող մարդիկ: Նրանք իրենց անձերը դրեցին ոչխարների վրա՝ նմանվելով քաջ հովվապետին և Փրկչին, իսկ սրանք վարձկանների պես թողեցին ոչխարներին և փախան: Ո՞վ երանելի և աստվածային անձեր, որոնց հիշատակը գրված է կյանքի գրքում:

Երբեմն ողբում էր Դավիթը՝ մտաբերելով Աստծու գթությունը. «Ու՞ր են քո նախկին ողորմությունները, Տեր» (Մաղմ. ՉԸ 50): Նմանապես և ես պիտի ողբամ Դավթի հետև և պիտի ասեմ արտասուքով. «Ու՞ր է առաջին եպիսկոպոսների և վարդապետների բազմու-թյունը, որ հայտնվեց ինչպես փայլակն աշխարհում՝ իր մեջ ունենալով կենդանի խոսքեր»: Դրանցից մեկն է և մեր պանծալին ու վկան, մանավանդ շատերի մեջ առաջինը, որի տոնախմբության պատմությունը մեր առջևում է: Նրանք ճշմարիտ հովիվներն են, իսկ սրանք՝ ապակամող գայլեր: Նրանք գորավոր են աստ-վածային գործի և խոսքի մեջ, իսկ սրանք՝ ընկղմված մարմնավոր ունեցվածքի և ժառանգության մեջ: Քա-նի որ սրանց մեջ միշտ նկատվում է բազում ջանք ու խոսակցություն արծաթի և խենեղ հանդերձների, երկվարների և ջորիների, արոր քաշող եզների, հոտե-րի և ոչխարների բազմանալու, և զանազան ազահու-թյունների մասին: Իսկ բանավոր հոտի փրկության և բարի նախանձի մասին, ոչ մի խոսք և ոչ մի հո-գատարություն: Ո՞վ անմտություն, ով չարարմատ արծաթափրոքություն, ինչպե՞ս պիտի սրանք կարողա-նան սովորեցնել Քրիստոսի գեղեցիկ աղքատությունը, որ մեզ համար աղքատացավ, և իր աշակերտներին պատվիրում էր գոտիներում պղինձ չունենալ: Իրոք մոլորված են, որովհետև չգիտեն գրվածը և ոչ էլ Աստծու խոսքի գորությունը: Արդ՝ լսեցե՛ք հովիվներ և ձեզ հետ մի՛ վերցրեք երկրի գանձերը: Չեր արծաթը շատացավ, իսկ խոսքը պակասեց: Չեր ունեցվածքը մե-ծացավ, իսկ համարձակությունը լռեց: Անբանների բազմությունը շատացավ, իսկ ձեր բանավոր հոտը հավիշտակվեց, որի համար Քրիստոս հովվապետին հա-շիվ եք տալու: Երբեք պիտի չանգիտանաք, թե յուրա-քանչյուրը միայն իր անձի համար պիտի պատասխան տա Աստծուն, իսկ դուք՝ քահանայապետներ, քահանա-ներ և

սարկավագներ՝ անհատների և ժողովուրդների հետ, որովհետև հավատ ընծայվեց ձեզ Տիրոջից: Տե-սե՛ք, որ ձեր մասին չի անգիտանում տաղանդների առակը: Զգո՛ւյշ եղեք անհատներից և ողջ հոտից, թող ձեր ոչխարներից ոչ մեկը չկորչի, որովհետև նրա ար-յունը ձեր ձեռքից պիտի պահանջի դատավորը: Այսու-հետև արթո՛ւն կացեք և քարոզեցե՛ք կյանքի խոսքը, հեռո՛ւ վանեցե՛ք բոլոր կենցաղային հոգսերը և պատ-րաստ եղե՛ք Տիրոջ գալստյանը, որովհետև երբ գալու լինի, ձեզ վստահված արծաթի տաղանդը տոկոսներով պիտի պահանջի:

Այս ամենը մտածելով, սիրելիներ, ազահուրյան պատճառով մի՛ հափշտակեք վերակացության աթոռը հանդուգն ձևով: Զեզ օրինակ պիտի ունենաք երանելի հորը, որի հիշատակն այստեղ հավաքված կատարում ենք, թե ինչպես էր այն երկար տարիների տանջանք-ներին դիմանում, և թե ինչպես գործի ավարտին հրա-ժարվում էր տեսչի պաշտոնից՝ հասկանալով, թե դժվար է կրել Տիրոջ լուծը: Նույնպես և դուք, որ ստացաք հովվության աստիճան, ողջամտությամբ հովվե՛ք, որովհետև ձեր ձեռքում է Տիրոջ հոտը, ինչ-պես ասում է առաքյալը. «Ոչ թե հակառակ ձեր կամ-քին, այլ հոժարակամ, ոչ թե շահախնդրությամբ, այլ հոժարությամբ, ոչ թե տիրանալով նրանց ժառանգու-թյանը, այլ օրինակ լինելով հոտին, որպեսզի [երբ] Քրիստոս հովվապետը երևա, ընդունեք փառքի անբա-ռամ պասկը (հմմտ. Ա Պետ. Ե 2, 4): Նույնը Պողոսն է գրում՝ ասելով. «Եպիսկոպոսը պետք է անարատ լինի, ինչպես Աստծու տնտեսը: Ոչ անպարկեշտ, ոչ բամբա-սող, ոչ թշնամացող, ոչ բռնասեր, այլ՝ հյուրասեր, խո-հեմ, բարեսեր, խոնարհ, արդար, սուրբ, պարկեշտ, հա-վատարիմ վերակացու լինելու վարդապետության խոսքին, որպեսզի կարողանա մխիթարել հավատա-ցյալներին, իսկ հակառակորդներին նախատել (Ա Տիմ. Գ 2, 5): Տեսնու՞մ ես, թե աստվածային առաքյալն ինչպիսի՞ ջանքի է հանձնառու լինում, եպիսկոպոսներին գոյուցանում է բարի գործերում նախանձախնդիր լինել, որպեսզի իր օրինակով կարողանա ուրիշներին օգուտ տալ: Բայց ոչ միայն քահանաներին է գոյուցա-նում՝ միշտ Աստծու օրենքի և բարի գործերի մեջ թևակոխել, այլ բոլոր մարդկանց՝ ըստ յուրաքանչյուր աստիճանի, ամենամեծերին և փոքրերին, թագավոր-ներին և դատավորներին, իշխանավորներին և նրանց, ովքեր իշխանության տակ են, հարուստներին և աղ-քատներին, երիտասարդներին և կույսերին, տղա-մարդկանց և կանանց, ծերերին և դեռահասներին, որոնք մեկ անգամ Քրիստոսի համար մկրտվել են և կոչվում են քրիստոնյաներ՝ հանուն Քրիստոսի: Նրան հավատացողները պետք է հիշեն Աստծու ուխտը, որ [դուք] պիտի հաստատեք Քրիստոսի խորանի առջև, իսկ խոսքով նրան Տեր և Աստված պիտի խոստովանեք՝ հրաժարվելով աստանայից և նրա բոլոր գործերից: Տեսե՛ք, թե իրոք ու՞մ պիտի մկրտեք ձեր անձը, ոչ՝ հրեշտակներին և ոչ՝ էլ հողեղեն թագավորներին, այլ՝ թագավորների Թագավորին և տերերի Տիրոջը: Բազ-մաթիվ վկաների առաջ նրան դավանեցիք, և նրան պիտի խոստովանեք: Որ և այսուհետև պիտի ակըն-կալեք նրա գալուստը երկնքից: Որովհետև գալով պի-տի բերի ձեր ուխտադրոշմ խոստովանության ձեռա-գիրը և [այն] պիտի ընթերցվի հրեշտակների և մարդ-կանց առաջ: Արդ, այսուհետև հեռո՛ւ մնացեք ան-աստված գործերից: Լսե՛ք առաքյալին, որն ասում է. «Այս են ասում և ուխտ հաստատում Տիրոջ հետ, թե մի շարժվե՛ք այնպես, ինչպես այլ թերահավատներ իրենց խավար հոգիներով և մտքի դատարկությամբ»: Որի համար, սիրելիներ, ինչպես ընդունեցիք պատ-գամը մեր Տեր Հիսուս Քրիստոսից և իր սուրբ աշա-կերտներից, նույնի մեջ ամուր կերպով պիտի հաս-տատվեք: Եղե՛ք հնազանդ ձեր ճշմարիտ առաջնորդներին և գոյուցե՛ք պղծություններից, որովհետև այս օրերը չար են, և հովիվների փոխարեն գայլերն են հովվապետ դառնում, որոնք արտաքինից հրեշտակի կերպարանք են ստանում, բայց ներսից աստանայի բնակարան են, խոսքով բարեպաշտ են ձևանում, իսկ իրենց գործերում ուրացող: Բայց մի՛ խաբվե՛ք նրան-ցից, այլ ինչպես ընդունեցիք մեր Տեր Հիսուս Քրիս-տոսին, նույնի մեջ քայլե՛ք մինչև վերջ, որպեսզի և նրա հետ թագավորելով վայելեք հավիտենական կյանք-ը:

Եվ արդ, սրա վերաբերյալ պիտի ավարտենք խոսքն այստեղ, բայց վերստին պիտի ձեռնամուխ լի-նենք մեր երջանիկ հոր և մեծ նահատակին ուղղված ներբողական խոսքերին: Քանզի նրա անչափ խոնար-հությունը մեզ մղեց այսքան երկարեցնել խոսքն այն-պես, ինչպես այն պետք է նրանց համար, ովքեր ցան-կանում են հասնել այս աստիճանին և տենչում են վե-րակացու լինել բանավոր հոտին՝ օրինակ վերցնելով այս երանելուն: Նրա նման նախ և առաջ [պարտ է] սրբել անձն ամեն կեղտից և ապա մոտենալ այս աստ-վածային սրբությանը, ըստ Տիրոջ հրամանի. «Թող փայլի ձեր լույսը մարդկանց առաջ, որպեսզի տեսնեն ձեր բարի գործերն ու փառավորեն երկնավոր Հորը» (Մատթ. Ե 16), նաև՝ «Եթե հանդիպեք մարմնավոր փորձություններին, մի՛ հուսահատվեք չհամբերելով, այլ մեծ հույսով սպասե՛ք»: Տեսե՛ք Աստծու միջոցով զգեստավորված հայրերին, թե ինչպես Քրիստոսի հո-տի համար համբերեցին այնքան նեղություններին և չարչարանքներին, համբերությամբ ընկան նեղու-թյան, չարչարանքի, հարվածի, բանտի, խռովության, հսկման, պահքի, սրբության սիրո, ճշմարիտ խոսքի և Աստծու գործության մեջ, փառքով և անարգությանը, օրհնությանը և նախատիքով, իբրև մահկանացուներ և ճշմարիտ կենդանիներ, իբրև սգացողներ և միշտ զվարճացողներ, իբրև աղբատներ, և շատերին հարս-տացնողներ: Այս բոլորը գրվեց որպես մեզ օրինակ նրանց մասին, որպեսզի մենք ևս գնանք նրանց ճանա-պարհով:

Նաև սուրբ մարգարեներն ու նահապետների դասը տարբեր փորձություններով անցկացրին իրենց կյանք-ը: Լսի՛ր իսկ Դավթին, որ թվարկում է իր վշտերի բազմությունը՝ «Տեր Աստված իմ հույսս քեզ վրա է, հալածողներից փրկիր ինձ», ապա՝ «Տեր մինչև ե՞րբ ես մոռանալու ինձ ամբողջովին», և թե՛ «Ես պատրաստ եմ տանջանքի մեջ ընկնելու, բայց հեռացրո՛ւ այն ինձանից», դարձյալ՝ «Ամեն օր կոխտում եմ ինձ իմ թշնամիները և ուտում եմ մոխիրն ինչպես հաց, ես պանդուխտ եմ և օտարական, ինչպես իմ բոլոր հայրե-րը»: Տեսնու՞մ ես, ոչ միայն իր նեղություններն է հայտնի դարձնում, այլև՝ նախնիներին, և ոչ միայն մեկին կամ երկուսին, այլ բոլորին. «Ինչպես իմ բոլոր հայրերը» (Ա Մնաց. ԻԹ 15) ասում է, ցույց տալով, թե նրանցից ոչ ոք այս աշխարհում հանգիստ չմնաց: Եթե փափագում եք, գնացե՛ք բազմավիշտ նահատակի մոտ, երանելի Հորի մասին եմ ասում, և չափավոր կերպով նրանից լսե՛ք բարեկամներից պատմած չարչարանք-ները, որպեսզի թերևս կարողանանք նրա խնդրանքն ու մեր թեթև նեղությունը համբերությամբ տանել. «Միթե՞ փորձություն չէ երկրի վրա մարդու կյանքը, վարձկանի օրական վարձը չէ՞ իր կյանքը» (Հոբ Է 1), նաև՝ «Ցավոտ գիշերներ են բաժին ընկել ինձ, ցավով եմ լցված երեկոյից մինչև առավոտ» (Հոբ Է 3, 4), «Ար-դարներն էլ ծաղրի են ենթարկվում, քանի որ մատնվում են ամբարշտի ձեռքը» (Հոբ Թ 23): Իսկ Աստծու մոտ ասում է. «Գիշերվա տեսիլքով վախեց-նում ես ինձ, մատնեցիր ինձ անօրենի ձեռք, ազգերին ինձ բամբասանք դարձրի՛ր, պաշարված եմ ես բոլո-րից» (հմմտ. Հոբ Է 14): Տեսնու՞մ ես ցավոտ պատմու-թյունը, տեսնու՞մ ես ծանր վշտերը: Սրա նման Երե-միան ևս խոսում է. «Ո՛վ մայր իմ, ինչու՞ ծնեցիր ինձ, դատված և դատապարտված մարդ եմ,

տեսնում են մարդկանց թշվառությունները» (հմտ. Երեմ. ԺԵ 10): Այսպես, բոլոր արդարների դասերը իրենց կյանքն անցկացրին ցավերի և չարչարանքների մեջ: Որի համար աղաչում և փոխարենն ասում են. «Միշտ մի՛ խնդրեք հանգընությունն ու ընդարձակությունը հե-տագա ճանապարհին»: Քանզի զինվորը, որ պայքարում է այս կյանքում և զորավարի հրամանով չի պայ-քարում, նրա կողմից չի պսակվելու: Նույնպես և դուք, մի՛ եղեք անպիտան և ծուլ պայքարի ասպարեզում, այլ նմանվելով երանելի մարդկանց, դիմացեք գալիք նեղություններին, որը բարեպաշտության համար է: Գիտե՛ք նաև՝ «Որ նեղությունները, -ըստ Պողոսի, -համբերություն են բերում, համբերությունը՝ փորձառություն, փորձառությունը՝ հույս բարիների հա-մար, հույսը երբեք չի ամաչեցնում նրա մեջ հաստատ-վածներին» (Հռոմ. Ե 4): Եվ արդ, միայն նեղությանը մի՛ նայեք, այլև՝ պսակին, ոչ միայն ապականությանը, այլև ի տրիտուր հատուցմանը, ոչ տանջանքին, այլ արքայության խոստմանը: Քանզի և այս հուստ լրումը մեծ է երևում՝ հանուն հանդերձյալ բարիքների ան-տեսել ներառյալ չարչարանքները:

Եվ այժմ բավական ենք համարում այն, որ այս նպատակով խոսեցինք: Եվ այնուհետ ասենք հետևյալը՝ հանգեցրվ այն խոսքին, որից սկսեցինք: Քանզի մեր երանելի հայրն ու մեծ խոստովանող Գրիգորը վերևում երևացող լուսավոր հայտնությունից հետո անսաց տերունական հրամանին, «Այնուհետև գնում էր ընդունելու քահանայապետության ձեռնադրությունը»: Եվ այնտեղ մեծագույն նշան կար, թե ով էր Գրիգորը, Աստված ցույց էր տալիս, ինչպես որ Սուրբ Հոգին աղավանակերպ տեսիլքով հայտնվում էր՝ նրա վրա հանգչելով: Եվ այդքան մեծ պատվով ետ էր վե-րադառնում Աստծու սքանչելի քահանայապետը՝ այ-ցելով իր նորահավատ ժողովրդին: Նրան պատվելու համար ընդառաջ էր գնում մեծ արքա Տրդատը՝ բոլոր գորքերով հանդերձ, և [նրանք] միմյանց հանդիպեցին Եփրատ գետի մոտ՝ ուրախությամբ ընդունելով բո-լորին: Քանզի նրանց մկրտում էր Սուրբ Երրորդու-թյան անունով: Ուր երկնքից անճառելի լույսն էր ծա-գում՝ որպես սքանչելի հրաշք տեսնողների համար: Եվ ապա Տիրոջ համար հարազատ ժողովուրդ էր պատ-րաստում: Հայաստան երկրում հիմնում էր բազմա-թիվ հրաշալի Աստծու տաճարներ: Կարգում էր եպիս-կոպոսներ, երեցներ և սարկավագներ, դասեր հոգևո-րականներից և վանականներից, ճոխ վարդապետու-թյամբ սովորեցնում էր նրանց աստվածային տառերի գորությունը, հաստատում հավատքի մեջ, ամրացնում առաքելական ավանդությունների հիմքի վրա: Եվ մինչև այժմ օրեցօր շատանում են լավագույնները՝ նրա ընտրյալ ժողովրդից և երկրից:

Իսկ երանելին կարճ ժամանակ անց հրաժարվում է վերակացությունից, նրա ցանկությունն էր՝ գնալ համբուրել լուրջությունը: Քանզի նրան շատ ցանկալի էր մեծ Եղիայի և Հովհաննես Մկրտչի հետ բնակվել անա-պատում, որի համար փափագում էր թաքցնել իր անձն այս մարդկային կյանքից, որպեսզի այնտեղ սրբությանը և անմարմին կերպով հանդիպեր անմար-մին Աստծուն դեմ հանդիման:

Այսպիսին են մեր սրբազան հոր ճանապարհները, և նրա այս քաջության պատմությունը: Այսպիսի լա-վագույն առաքինությամբ ապրեց կյանքում, ոչ թե կյանքի ցանկությունների մեջ, այլ՝ զրկանքների և նեղության, քաղցի և ծարավի, ցրտի և մերկության, բանտի և կապանքների մեջ, լեռներում և անապա-տում: Սիրեց Աստծուն և նրանից սիրվեց, փառավորեց և փառավորվեց: Իմ Պանծալուն, ասում է, պիտի մեծա-րեն: Երրորդություն քարոզող Գրիգորը, ուղղափա-ռություն հաստատողը, Քրիստոսի հոտի տեսուչը, հո-գու իմաստության տաճարը, երկնքի կառավարողը, օրում ճախրող թռչունը, տիեզերքի անմար լույսը, լուսավոր արուսյակը, մոլորվածների առաջնորդը, ըն-տիր անոթը, սուրբ բնակարանը, Աստծու ընծան, Սուրբ Հոգին ընդունողը, միասնական Երրորդության բնա-կարանը, օրինակն առաքինության, Աստծու պատվի-րանների շտեմարանը, հայրապետների գեղեցկություն-ը, վանականների լուսավորությունը, սրբության ուղ-ղիչը, հավատքի հաստատողը, եկեղեցու հիմքը: Գրի-գորն է Քրիստոսական օրենքների վարդապետը, դեռ-րին հալածողը, օրինակը դժվարությունների, խաղա-դության կերպը, պատկերը խոնարհության, ճգնավոր-ների նկարագիրը, անսպասարբնակ տատրակը, լուսա-փայլ արեգակը, արագահաս միտքը, անբուն աչքերը, ապաշխարության ուսուցիչը, դարձի եկածների միջ-նորդը, մոլորվածների առաջնորդը, հիվանդների բժիշկը, հիվանդությունների կործանողը, քաջ հովիվը, անբուն պահապանը, համբերության խարիսխը, անտե-սանելիների գուշակողը, ստորին բաներն արհամար-հողը, երկնասլաց արծիվը, հրեշտակների դասակիցը, առաքյալներին հաղորդակիցը, մարտիրոսներին չար-չարակիցը, արքայության բնակիչը, Հայր Աստծու ժառանգը, Քրիստոսի ժառանգակիցը, որ Երրորդու-թյան առջև, հրեշտակների հետ պիտի բարեխոսի միշտ բովանդակ աշխարհի համար:

Եվ դու, աստվածային և պատվելի մարդ, որ բոլոր-րին Քրիստոսի անձին մոտեցնելով, որպես լույս երևացիր տիեզերքից, ով աստվածունակ և երջանիկ հայր, որ գեղեցկապես ապրելով կյանքում իրագոր-ծեցիր ճանապարհը, պահեցիր հավատքը՝ հասնելով պսակադիր նպատակին, և քո առաջնորդ մտքի մաք-րությամբ, որքան հնարավոր է մարդկանց, աստվածա-տես լինելով բարձրացար քո անհասանելի բարձրու-թյանը: Դու ուներիդ վրա առնելով չարչարանքների Խաչը, համերաշխությամբ քայլեցիր Քրիստոսի հետ, որով անկողոպտելի գանձ գանձեցիր երկնքում քեզ համար պահված: Դու ամեն ինչ վաճառեցիր և թան-կարժեք քարի փոխարեն ստացար մարգարիտ Քրիս-տոսին: Դու ավագի վրա ծուլորեն չկառուցեցիր տու-նը, այլ Քրիստոսի հավատքի վրա հաստատված վեճով զորացրիր հիմքը, ուստի և անասան մնացիր օղա-բնակ չարքերի դառնաբեր հողմերից՝ հեռանալով կուպաշտության հորձանուտից: Դու ամբողջովին կրեցիր այս կյանքի բովանդակ ցերեկային ծանրու-թյունը և միջօրեի այրող շոգը, որով Տիրոջից փոխա-րենը տոկոսով ընդունեցիր: Դու Աստծու շնորհներից քեզ տրված տաղանդը բաշխելով առատապես բազմաց-րիր, որի միջոցով լսեց երանելին [Տիրոջ] ձայնը, «Բա-րի՛ և հավատարիմ՝ ծառա, մտիր քո Տիրոջ ուրախու-թյան մեջ» (Մատթ. ԻԵ 21, 23): Դու քո հոգու ողորմա-ծության լապտերը յուրով անմարելի պահեցիր՝ պատ-րաստ լինելով մտնել Քրիստոսի երկնային առագաստ-ը: Դու, անցնելով նեղ և անձուկ արքայության շավ-դով, այժմ վալելում ես վերին գերաշխարհիկ կայա-նում: Դու անցկացնելով քո կյանքը մահվան խոկու-մով, մարմնական ախտերը աստվածասիրության օրի-նակով հնազանդեցրիր հոգուդ: Դու հասնելով անմեր-ձենայի անարատության դրյակին՝ սիրո հավատքի և հույսի գերազանց առաքինությամբ վերացար անյու-թականի մեջ, Եղիայի նման կառք վարելով երկնքում, ամբողջովին միանալով Աստծուն աստվածային սրբու-թյամբ: Եվ քանի որ համառոտ ասվեց, դու խելահա-սությամբ հավաքիր բոլոր հավիտենական սրբերի առաքինությունները՝ մեղուների

օրինակի պես, քեզ նմանեցրի յուրաքանչյուրից ընտրելով առաքինի վարքեր, որոնց մախ պիտի ներկայացնեք մեկ առ մեկ՝ հիշատակելով ընտրյալների անունները:

Աբելը հաճելի գտնվեց մաքուր, անարատ պատա-րագով: Իսկ դու՝ բազմերջանիկ հայր, որպես կենդանի ընծա Աստծուն նվիրեցիր քո ողջ կյանքը՝ հավելով նույնին քո հանապազորյա մաղթանքներով: Ենովսն անտեսանելի հույսով ապավինեց Տիրոջը: Իսկ դու ար-դեն իսկ ապագա հույսի օրինակն ես ցույց տալիս: Ենովքը, Աստծուն հաճելի լինելով, վերացավ երկինք: Իսկ դու քո հոգու աչքերն ամբողջովին երկրից եր-կինք փոխադրեցիր: Նոյն արդար լինելով և հաճելի գտնվելով գոհերի վրա՝ փայտյա տապանով կենդանի ազգերին ազատեց ջրհեղեղի կործանումից: Բայց դու մի նոր տապան հաստատեցիր՝ Քրիստոսի Եկեղեցին, և բազում մարդկանց ազատեցիր կռապաշտության ջրը-հեղեղից: Աբրահամը սքանչելի զրտնվեց աստվածապաշտությանը և հյուրասիրությանը, մեկ անգամ որպես ընդունված գոհ առանց մորթելու Աստծուն էր ընծա-յում որդուն, որ խոստացված էր: Բայց դու ոչ թե մեկ անգամ, այլ միշտ հյուրասիրությանը ընդունեցիր Քրիստոսին տառապանքների գբի մեջ, և մորթեցիր՝ Իսահակի փոխարեն ոչ թե ոչխար ընծայելով, այլ՝ ինքդ քեզ, որպես բանավոր նվիրական պտղով ողջա-կեզ, ընծայվեց կենդանի Աստծուն: Իսահակն իր ար-դարությանը օրինակ լինելով փառավորվում է, իսկ դու իբրև արդարության և ամեն տեսակ առաքինու-թյան ճանապարհ, քո անձի մեջ սրբորեն մարմնավոր-րում ես ամեն տեսակ առաքինություն և բարության օրինակ: Հակոբը պարզ հոգով և բազում որդիներով սքանչելի դարձավ, որ և տեսնում էր երկրից դեպի երկինք ձգվող սանդուղքները՝ մեզ մի մեծ խորհրդի օրինակ ցույց տալով: Բայց դու ծնեցիր Քրիստոսի համար հովիվներ, հովվապետներ և բազմաթիվ հոտեր: Եվ քո մտքում դնելով վերելքը, համաձայն իմանալի սանդուղքի վերընթաց աստիճանների՝ փառքից փառք փոխադրվեցիր և երկրից երկինք վեր կանչվեցիր: Այս պատճառով ոչ թե [խաչախարհի] նշան ունեցող ոչ-խարներ, այլ [Սուրբ] Հոգու շնորհների նշանով լույսի բազում որդիներ բերեց դեպի փառք: Հորե անարա-տության և ժուժկալ համբերության պատճառով մեծ երանելի կոչվեց, բայց քո չարչարանքների վարանքը ավելի պակաս չերևաց, քան նրանը: Որովհետև ոչ թե արտաքին քաղաքի աղբերում, այլ բազմավիշտ դժոխ-քի խոր անապատում, և որդերի փոխարեն դիմանում էր, դաժան թունավոր իժերին և քարբերին: Հոսեանի ողջախոհությանը ու անաչառությանը անվանի եղավ, իսկ դու, որպես համեստության օրինակ, բոլորին սար-սափեցրիր, և իմանալի եգիպտոսիացի՝ բնական հիվան-դությանից մաքրելով միտքը, մերկանալով պատմու-ճանի մեղքերից, ամոթից փախար: Եվ դու անհիշա-չարությանը եղբայրադավ բռնավորներին առատա-պես կերակրեցիր աստվածային խոսքի սովի [ժամա-նակ] երկրնքից իջած հոգևոր հացի ճշմարիտ գիտու-թյամբ:

Մովսեսը հեզությանը և օրենքի հաստատմամբ փարավոնից աստված կոչվեց և իսրայելի ժողովրդի առաջնորդ: Բայց դու, ո՛վ աստվածունակ հայր, խո-նարի բոլորի նկատմամբ, մանավանդ բռնավորների պատճառով հանձնվեցիր տանգանքի մեջ: Եվ մտնելով մահատանության մշուշի մեջ, ընդունեցիր աստվածա-յին օրենքների տախտակները, ուր ոչ միայն Իսրայել-յին, այլև ողջ տիեզերքին ավանդեցիր հոգևոր պատ-վիրաններ: Եվ ի պատիվ չաստվածների ձուլված պատ-կերների մեղաններն, իբրև փարավոնի կառքեր փոսի մեջ խորակեցիր քո քաջությանը: Սամվելը նախքան որովայնում հղանալը նվիրվեց Աստծուն, որ և ընդու-նելով մարգարտության շնորհները՝ գուշակում էր ապագան: Իսկ դու նախքան ծնվելը Հոգու մախա-խնամությանը որպես նվեր ընծայվեցիր Աստծուն և մարգարեական աչքերի անճանելի տեսիլքով տեսար ապագայում կատարվելիքը: Քաջ Դավիթը, հոգու զո-րությանը պատերազմելով ամբարտավան Գողիաթի դեմ, կործանում էր պարսատիքով: Իսկ դու անմարմին Գողիաթին, այսինքն՝ սատանայի պետությանն ու իշ-խանությանը, Քրիստոսի խաչի գորությանը ընկնելով գետին տապալեցին, և ազատելով բանավոր գառներին առյուծի բերանից՝ բոլոր մտքերը գերեվարելով [դրե-ցիր] Քրիստոսի հնազանդության ներքո: Եղիան գովե-լի եղավ Աստծու նախանձախնդրության մեջ, որով-հետև մարգարեներին ամոթի մատնելով համարձակո-րեն կործանում էր: Իսկ դու բռնավոր արքային՝ ամո-թալի ախտերի սպասավորին զազարալի անասունի կեր-պարանքի փոխարկեցիր, ոչ թե կործանման մատնե-լով, այլ վերստին առաջնորդեցիր կյանքի մեջ: Հով-հանները՝ կանանց ծնունդների մեջ մեծը, Արարչից ձայն բարբառի անապատում, Քրիստոսի կարապետ ու մկրտիչ, բարեբանվեց իբրև: Եվ ինչպես ինձ է թվում, դու ոչ պակաս երևացիր, քան նա: Քանզի հայրա-պետների դասերի մեջ նախամեծար եղար, նահատակ-վեցիր վկաների հետ, գնացիր մարտի դաշտ, ճգնեցիր անապատում, նրա հետ ձայն բարբառ գոչեցիր, Աստ-ծու խոսքը առաջնորդեցիր, մկրտեցիր Քրիստոսի բա-նավոր հոտերի անթիվ բազմությունը, որպես պայծառ լույս ծագեցիր արդար Արեգակի հետ:

Այսպես առաքինի գործերով տակավին բոլոր ար-դարներին և մարգարեներին ես քո մեջ մարմնավոր-րում՝ ոմանց նախանձախնդրությունը, մյուսների համբերությունը, ոմանց նեղությունը, ուրիշների մտքի վեհությունը: Եվ ոչ միայն սրանց [ես մարմնա-վորում], այլև՝ Քրիստոսի աշակերտներին, [նա] Հոգու շնորհները ստվերոտ օրենքներից բաժանելով ճշմար-տության հաստատագույն պաշտամունքի մեջ մեզ Աստծու խորհուրդն էր ցույց տալիս: Պետրոսն ու Պո-ղոսն, ըստ հոգու միաշունչ եղբայրներ լինելով, Քրիս-տոսի լծակիցներն են, ընտրյալներն ու առաքյալներից առաջինները, որոնք համայն տիեզերքն ընդունեցին տարածքով, և հռոմեացիների հռչակված քաղաքում քարոզում էին Տիրոջ Ավետարանը: Որոնք և սատա-նայի անոթ, Սիմոն կախարդին գոռոզության բար-ձուներից Քրիստոսի նշանով գետին տապալելով ճեղքե-ցին: Իսկ դու, ո՛վ աստվածագոյաց հայր, ոչ թե մեկ մատու կամ ինչ-որ մի անկյունում, այլ արևելքից արևմուտք, երկրի մի ծայրից մինչև նույնի մյուս ծայրը լցրիր Քրիստոսի Ավետարանը: Նա մինչև իսկ Հռոմի մայրաքաղաք հասավ, առաքելաշնորհ հայրա-պետի և աստվածասեր արքայի հետ միաբանելով, մի-մյանց ընդունեցին առաքելական սիրով՝ մեկն արև-մտյան մի երկրից ծագեցնելով աստվածիմացության ճշմարիտ լույսը, իսկ մյուսը՝ որտեղից դուրս է գալիս արեգակը, նույնպես լուսավորող, և երկուսի խոսքերը ծավալվելով լցրին ողջ տիեզերքը: Մարգարեների հետ Հոգով մարգարեացար, քարոզեցիր Քրիստոսին առաքյալների հետ, ավետարանիչների հետ ավետա-րանեցիր Աստծու Որդուն, հայրապետների հետ վար-դապետեցիր կենաց խոսքը, ճգնեցիր անապատական-ների հետ, նահատակվեցիր մարտիրոսների հետ, հո-վիվների հետ հովվեցիր քո բանավոր հոտը, խարդախ բշնամուց փորձվեցիր, հաղթեցիր Քրիստոսի հետ:

Այստեղտես քեզ ի՞նչ պիտի կոչեմ, երկրագո՞րծ, իրոք ճշմարիտ [երկրագործ], որովհետև արևելյան աշխարհի բանակահոգևոր հողը փափկեցրիր երկրա-գործությանը, որից անհավատության փուշն արմա-տախիլ արվեց, փոխարենը սերմանեցիր բարեպաշտության խոսքը, և կարելով նորատունկ հոգևոր այգին՝ բազմապատող դարձրիր

այն, որից երկրագործության պտուղները հավաքեցիր հոգևոր շտեմարանում: Արդյոք ճարտարապետ անվանենք քեզ, անշուշտ իրավացի կլինի, քանզի դներով ճուշտ մեխանիկները քո քաջ արիությամբ տապալելով ոչնչացրիր երկրում, և սատանայի բնակավայրերի փոխարեն, այս ողջ երկրում հաստատեցիր գեղեցիկ և հրաշալի տաճարներ հանուն Քրիստոսի: Դու իբրև իմաստուն ճարտար-քապետ հոգու իմաստությամբ վերականգնեցիր հա-վատացյալների նորակերտ եկեղեցիներն առաքելա-կան վեմի հիմքերի վրա: Ուրիշ ի՞նչ անվանենք քեզ, զինվո՞ր, այո, քանզի որպես քաջ զորավար, զինված հակառակ աներևույթ թշնամու քո մարմնի բազում վերքերով մարտնչեցիր [հին] օրենքների դեմ և հաղթեցիր, ու փրկության վահանով ամրացրիր հա-վատքի գլուխը՝ որպես անասանելի և անշարժ վեմ, ամուր պահեցիր, պատերազմներից առաջ եկող բա-զում հիվանդություններից: Եվ հույսով հակառակորդին դեմ կանգնելով՝ քաջությամբ պատերազմով թշնամուն ամոթի մատնելով ետ դարձրիր՝ հալածելով քո նորասունդ ոչխարների փարախից: Ուրեմն քեզ հրեշտա՞կ անվանենք: Քանզի դու հրեշտակների անկա-րոտ բնությունից հեռու չլինելով, մարմնի մեջ ապ-րելով անմարմնապես, ինչպես երկնային մի մարդ, տեսանելիներիս հրեշտականման վարքի օրինակ ես ցույց տալիս: Որովհետև հրեշտակի ձեռքով սկզբից ի՞նչն էր, որ առավելությամբ եղավ՝ Ամբակումին Սիոնից Բաբելոն հասցնելը, թե՞ առյուծների գբում Դանիելին ճաշ մատուցելը: Քանզի դու ավելի ևս հրաշափառ ես, [որովհետև] ինչպես ինձ է թվում հավաստիորեն, հրեշտակի ձեռքով էիր կերակրվում բանտում: Նավավա՞ր վերակոչենք քեզ, և անշուշտ իրավացի կլինի, քանզի այս մեծ և արձակ աշխարհում, դիվական անհավատության ծովն ալեկոծված ծփում էր, [բայց] քո առ Աստված սրբազնագույն հայցվածքով, մոլորության հողմի կուտակումը դարձ-րեցիր մեղմ քամի՝ շատ զգուշորեն առաջ տանելով ալեկոծված նավը հասցրիր ճշմարիտ խաղաղության նավահանգիստ:

Արդ՝ ով սուրբ հայր և բոլոր հավատացյալների փրկության առաջնորդ, չթերացար քո սիրելիներին փոխադրել աշխարհից: Բայց թեպետև բոլորի պես պարտքը հատուցեցիր, ըստ բնության օրենքների, սա-կայն քո քաջության հիշատակը պիտի մնա մեզ հետ հավիտյան: Այսուհետև նույնպես խնդրում եմ հոգևոր այցելությամբ չմեկուսանալ մեզանից, այլ հիշել մեզ առանց մոռանալու, խնդրելով բոլորիս հույսի փրկու-թյունից, որպեսզի մենք ևս քիչ նեղությունները համ-բերությամբ տանենք: Քանի որ ըստ առաքյալի. «Նա, ով փորձառու է, կարող է օգտակար լինել նրանց, ովքեր փորձանքի մեջ են» (Եբր. Բ 18): Եվ այս փոքրիկ ներբողական խոսքը բարեմիտ ձևով ընդունիր մեզա-նից, որովհետև թեպետևայն թերի է քո արժանիքը [տարփողելու համար], սակայն ավելի ջերմ հավատով և կատարյալ սիրով մատուցեցի՞նք, և քո վշտաբեր նեղությունների հիշատակով մեր մեջ մխիթարվելով սփոփվեցի՞նք: Իսկ դու պիտի ընդունես [այս խոսքը], ինչպես Քրիստոս՝ այրի կնոջ լուման: Որովհետև ես նույնպես տկարացած նրանով նույն անդամների գո-րությունից, մարմնով լինելով տկար և վշտահար՝ անձկությամբ, մանավանդ քո տարածքի ազգակից-ների սիրուց մղված ջերմագին սրտով որպես ընծա սիրո օրինակ պիտի մատուցեմ սա քեզ: Ահավասիկ ես նույնպես ուխտավոր եմ այսուհետև լքելու այս տաղտկալի կյանքը և լինելու Քրիստոսի հետ: Թերևս այնտեղ հանդիպենք միմյանց գեղեցիկ և ուրախալի հանդիպումով, մշտնջենապես միասին բնակվելով, ար-ժանավոր լինել երանավետ խոստումներին, որոնցով բոլորը պիտի հասնեն մեր Տեր՝ Հիսուս Քրիստոսին: Նրան, Հոր և Ամենասուրբ Հոգու հետ միասին փառք և գորություն հավիտյանս հավիտենից, Ամեն: